



1927

1

891-99
U-66

Handwritten mark

ՄԱՌԻՊՎԱԿՆԵՐ Է 1951 ՔԷ

ՆՈՒՆՈՒՑԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊ



ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Պ. ՄԸՇԸՐՑԵԱՆԻ.



ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕՂ.

ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ ՍԱՆՈՅԵԱՆՑԻ.

1892

11
28567

6242



Дозволено цензурою. Тифлисъ, 11 Мая 1892 г.

ՆՈՒՆՈՒՓԵՐ

ԺՈՂՈՎԱՐԴԱԿԱՆ ՎԷՊ.

Զմեռն է խորին ցրտին ու դժնեկ,
Շրթունքով հիւսիս կ'փչէ սաստիկ,
Ոչ մի բան դռնէն հեռի չերևնար,
Սար ու ձոր ձնով ծածկած կ'մնայ.
Ոչ որ չի ցանկար իւր տանէն ելնալ,
Ոչ որ չի ցանկար երթալ ճանապարհ.
Ոչ որ իւր ջերմիկ թոնիրի շրթեր
Զրդձար մի վայրկեան ամայի թողնել.
Սմենքն են ցրտէն բքէն սարսափած,
Տներուն դռներ պինդ դրած փակած.
Ճոխն իւր փառահեղ դահլիճներու մէջ,
Աղբատն իւր հիւղին մըձոթ մթին մէջ,
Երկրասէր մըշակն գոհունակ սրտով
Գոմի սենեկի վառարանի բով
Բազմած, կ'ջեռնու, արհամարած բուք,
Իւր ընտանեաց հետ պարզ և բարեշուք:
Վայ ուղևորին, որ այդ ժամանակ
Մոլորած կերթայ դաշտ, լեռ ու ձորակ:

* * *

Լսիր, այսպէս դեռ կ'յիշեմ մի օր էր,
 Երկինք էր ամպ, գիտին ձիւնով թաթաղուն.
 Ահեղն հիւսիս մռնչելով կարշաւէր
 Դաշտերուն մէջ և խորածոր լեռներուն,
 Երբ իւր գոմի սենեկի մէջ կար բազմած,
 Շրջապատած որդիներով, հարսներով,
 Մերձ ակութիւն աթարներէ բորբոքած,
 Ծերուկ Վրոյր բազմած անհոգ կար սրտով.
 Երկար կակուղ պարզած մամուլի ծխափող,
 Շրթունքներէն ծխի ամպեր կ'արձակէր,
 Մինչ հարսներուն ճախարակներ ճռնչող,
 Պտոյտքելով կ'մանէին նուրբ թելեր,
 Մինչ իւր որդիք նարտի խաղով զբաղուած,
 Կը մղէին կոճերն յետկոյս ու յառաջ,
 Իսկ նազենակ նորա դստրիկն հերապանծ,
 Դալարագեղ նոճու նման թարմ կանաչ,
 Ոտքի կանգնած, աջոյ ձեռին սպիտակ
 Գզաթ պատած ու գիրգ բազուկն առած վեր,
 Փափուկ, ճապուկ մատունքներով ճարտարակ
 Պարզած զզաթն ողորկ լիկով կողորէր,
 Յանկարծ կարծես ինչ որ բանէմ աղդուած,
 Կը վրդովի սերուն դէմքին դեղն և գոյն,
 Ամփոփելով մանուկող թելերն պարզուած,
 Եարժուց կ'երթայ շուտով դէպ դուս նա իսկոյն.
 Ապա դարձած կ'ասէ— «Հայր իմ» — Վրոյրին,
 «Այս ցրտաշունչ բքոյ ժամոյն հեծեալ մի,
 «Ձիւնով լցուած ոտք ու գլուխ բնաւին,

«Հանդէս դրան կանգնած՝ դէմքով տխրալի,
 «Պատասպարիլ խաղաղ և ջերմ մէջքո տան,
 «Կը խնդրուի թոյլ տալ իրան դէթ մի ժամ»:
 Կոյսի խօսքէն շարժած՝ դէս դուրս կ'փութան,
 Հայր ու որդիք, հարս ու աղջիկ, խուռն երամ,
 Գուռը բացած, դռան դիմաց կ'տեսնուեն,
 Օտարական մէկն ահա անդ է կանգնած,
 Գլխոյն ձգած պատած կնկուղ սևադոյն,
 Թուխ ասքախոււմբ, տառատոկով ծածկուած,
 Նստած ահել ձիոյն վերայ շիկորակ,
 Որ տխրաձայն ու կարկամած շրթունքով,
 Կը պաղատի պաշտպանութիւն, ջերմիկ յարկ:
 «Արի՛, ով հիւր, իջլի՛ ձիէդ դու շուտով,
 «Քեզ Աստուած է իմ յարկին տակ ուղարկող,
 «Արի՛, որդի, կըրծամ քեզ հետ բաժանել
 «Իմ հացն ու աղ, զոր վաստակեց ճակտիս ցօղ»:
 Արտասանեց ծերուկ Վրոյրն այս խօսքեր,
 Կառնու 'ի ներքս ասպնջական իւր դէմէն.
 Նորեկ հիւրին, ուրախամիտ երեսով,
 Թոթափելով ձիւն ու սառոյց վերայէն,
 Կը բազմեցու մերձ ակութին լի հրով:
 Հայր ու որդիք շրջապատած օտարին,
 Նորա վերայ հետաքրքիր աչքերով
 Կուռ և հանդարտ ուշի ուշով կ'նային,
 Մինչ կ'ջեռնու նա ակութին բոցերով:
 Իսկ կանանիք անյայտ եկին պատճառաւ,
 Այլ չեն դառնար մէջ սենեկին դիւղական,
 Մի զատ սենեակ առանձնացած շտապաւ,
 Ախորժահամ ճաշ պատրաստել կ'փութան»

Իսկ Նազենակ մի ձեռքն սափոր լի ջրով,
 Եւ միւսն էլ կոնք, ձգած ուսին ջինջ դենջակ,
 Պարկեշտագեղ յուշիկ, յուշիկ քայլերով,
 Հանդէպ հիւրին ակն 'ի խոնարհ կ'առնու կանգ:
 «Ո՛վ հիւր» յայնժամ կ'ասէ Վրոյրն «ընդունիր
 «Նշանն սրտին մեր հիւրասէր. թոյլ տուր դու
 «Հեղուկ ջերմիկ ջրի տարափ լիալեր,
 «Քո ոտքերուն եթէ կըղձաս սիրարկու,
 «Սրտով տանես իբրև որդի ընդունուել:
 Բայց լուռ է հիւրն, երեսն անգամ ակութէն
 Ձի դարձներ, իւր շուրջ դիտելն իսկ չուզեր,
 Ոչ տառատոք, և ոչ կնկուղ վերայեն,
 Գալած ժամէն դեռ չէ հանած մեկուսի,
 Պատկեր դիմին անգամ տեսած չեն ճշտիւ,
 Ծերունի է, թէ առոյգ անձ պատանի,
 Հիւրնկալող այդ անձինքներն յոյժ ազնիւ:
 Միայն սրտէն կ'լսուին խոր հառաչներ,
 Որ կ'խառնէ հետ կրակի բոցերուն,
 Լռիկ մնջիկ նստած, բնաւ անտարբեր
 Իւր շրջակայ բազմողներու հարցերուն.
 Ծերուկ Վրոյրն որդիներով միասին,
 Օտար հիւրի վարման մասին զարմացած,
 Ապշած յուշիկ իրար երես կ'նային,
 Կարծես կըղձան միտք մտած հետ ժողոված
 Գուշակօրէն, թէ գուշակել հնար է,
 Տեղեկանալ խորհրդաւոր այդ հոգին:
 Ի՞նչ կ'ըջի, յուստի՞ կուգայ և ո՞վ է,
 Եւ է՞ր նոցայ հիւրամեծար ջերմագին,
 Տոյցերուն նա կայ անտարբեր սառնապատ,

Մի՞թէ նորա աշխարհին մէջ բնաւին
 Հիւրի համար չ'կայ օրէնք զթառատ:
 Մինչ այս դունակ խոր լռութիւն մի տիրած,
 Խիստ տխուր են, թէ հիւրն և թէ հիւրնկալ,
 Անխօս բնաւ կ'խորհէին լռամած,
 Ահա դունն ներս կ'բերուի ճոխափայլ
 Խորտիկներով պատրաստուած լի սեղան,
 Կողի քնքոյշ, սեր անուշիկ մեղրախառ,
 Զուկ, խորոված, դինի ազնիւ հոտեան,
 Մերձ օտարին կ'զետեղին հանդարտիկ:
 «Ո՛վ հիւր, դարձեալ կասէ Վրոյրն կարծես թէ,
 Սրդողելով ինքն իւր միջով սակաւիկ,
 «Հաց մեր անգամ բաժնել մեզ հետ քիչ մի՞թէ
 «Հաճելի չէ. միշտ դու այդպէս ակուժին
 «Մօտ բազմելով պիտի մնաս անտարբեր
 «Զքեզ յարգող այս մեր սրտի սերտ ձայնին,
 «Թէ դու Հայես կցորդ ազնիւ արեան մեր.»
 Փրփրադէզ լցին բաժակ մի դինի,
 Կարկառելով դէպ օտարին «հրամէ»
 Կասէ «յօրէս դու ես միգի ընտանի,
 «Խորհրդաւոր մնալ մեզ հետ անդէպ է,
 «Թափէ անձէդ այդ տառատոքնին ու կնկուղ,
 «Բացուիր, խոսէ որդու նմանս ու եղբօր,
 «Թող չ'լինինք մենք քեզ բնաւ անպտուղ,
 «Ոչ էլ դու մեզ անյայտ մի հիւր կամակոր:»
 — «Ի՞նչ կ'կարծես, իմ ծերունի, իմ հայրիկ,
 «Չեմ ես մարդու որդի ծնուած պէս այլոց,
 «Մի՞թէ քար եմ, չեմ հասկանար ձեր քաղցրիկ,
 «Հիւրամեծար զթոյն այդ ցոյց սիրով հո՛ծ,

«Որ այս բքոտ, ցուրտ ու դժնիկ ժամանակ,
 «Առիք ինձ տան, պատուպարիք վտանգէ,
 «Թէեւ ինձ մօտ մահուան սարսափն ու խեռ. կեանք,
 «Համարեայթէ մէկ միւսէն տարբեր չէ»:
 Այսպէս յանկարծ խորհրդաւոր օտարին
 Լռող ձայնը կենդանացած կը հնչէ,
 Բայց կարծես թէ ներքին վշտէ նա կողդուած,
 Բեկուած ձայնով դարձեալ իսկոյն կը լռէ,
 Մի խոր հառաջ միայն սրտէն արձակած:
 Ու տանելով ձեռք կնկուղին կառնու վայր,
 Կը մերկանայ տառատակէն թաւարիծի,
 Զինավառուած երիտասարդ մի կայտառ,
 Ահա նոցա աչքին յանկարծ կերևի:
 Հիւրի ախորժ դէմքի մասին հիացած,
 Կուրախանան ամեն սրտեր որ անդ կան,
 Դարձեալ Վրոյրն լեցուն բաժակն երկայնած
 «Ըմպէ որդի, լաւ է գինին տխրական,
 Հոգու համար կ' փարատէ նա բոլոր,
 «Մարդու սրտի պատող ամպեր մթազին,
 «Մոռացուլթեան կուտայ վշտեր անգամ նոր»:
 Կառնու բաժակն օտարական պատանին,
 «Հիւրամեծար» կուսէ «ազնիւ սրտերուդ
 «Որպէս լինել շնորհակալ չ'գիտեմ.
 «Որոց ահա կը վայելեմ սէրն ու գուլթ,
 «Մինչ այս վայրկեան թէեւ ծանօթ ձեզ ոչ եմ,
 «Երկինք փոխան ձեր այդ ազնիւ սրտերուն
 «Պարզեւէ ձեզ, ո՛վ ծերունի, յարմար ամ,
 «Հանդերձ որդով և թոռներով սիրասուն
 «Ծաղկի բո տուն, որպէս դարաստ անթառամ»,

Գաղարկելով ազնիւ դինու լի բաժակ,
 Խոնարհելով սիրուն ճակատն դէպի վայր,
 Կը դարձնէ զայն ծերունոյն գոհունակ,
 Ապա կառնուն ճաշել բոլորն հաւասար,
 Շատ բաժակներ կ'սպարպուին լի գինով,
 Կը սպառին շատ անուշահամ խորտիկներ,
 Ամեն սրտեր դէպ մէկ մէկի ջերմ ոգով,
 Ակնարկելով խնդրեն երկնից կեանք ու սէր:
 Ամեն աչքեր գինու հրով բորբոգուած,
 Խնդաժպտա միմեանց վերայ կը հային,
 Ձմեռն ու բուք կարծես բնաւ մոռացած,
 Որ տանէն դուրս կը մռնչէ տակաւին:
 Եւ բեղ, ո՛վ հիւր, գինոյ ուղիսեր փրփրուն,
 Առին, տարին, սրտէդ հանած վիշտ ու ցաւ,
 Մոռացար դու. քո Նոնո-Քոյ գեղանոյն,
 Որոյ դիակ արիւնոռոգ ըշտապաւ
 Արտամետու ուղոյն վերայ թողեցիր,
 Ու այն օրէն թափառական դու այդ կեանք,
 Թշուառական, անմխիթար յանձնառիր.
 Հիւրի սիրտը խամուր ծաղկի նմանակ,
 Գինու ցողով թէև թմրած չ'զարթեաւ,
 Ճակտի կնճիռն ամպածրար տխրորակ,
 Գէթ մի վայրկեան բնաւ երբէք չ'սպարզաւ,
 Ի բաց առած այն վայրկեանը, երբ յանկարծ
 Նորա աչերն անկան փափուկ գեղեցիկ,
 Նազենակի դէմքին վերայ գեղապանծ,
 Սրտին զգաց խլրտիւն մի վաղանցիկ,
 Որովհետև կոյսի դէմքին նկատեց,
 Նմանութիւն իւր կորուսած սիրուհոյն,

Խորին «ախ» մի սրտէն թռուց ու լռեց,
 Մինչև ցաւարտ ճոխ սեղանոյն ու գինոյն.
 Սեղանն արդէն վերջացած էր գոհունակ,
 Հիւրն էլ օտար չէր ելևի մէջ նոցայ,
 Երբ որ վրոյրն ասաց «որդէ, դու հիմակ,
 «Ո՞ր աշխարհէն և դու ո՞վ ես ինձ ասա»:
 Այսպէս կառնու տխրահնչիւն, ձայնով մի
 Հիւրը պատմել իւր ով լինելն և ուստի:
 Եթէ ինչ դէպք զինք կ'աքսորէր անդադար,
 Երկրէ երկիր միշտ անհանգիստ ու թշուառ:

* * *

«Կարծեմ թէ վան, ո՞վ հայր, ծանօթէ բեզի,
 «Հարուստ բերրի իւր բնութեամբ գեղանի,
 «Ուր ծով կապոյտ ալիքներով երերուն,
 «Վճիտ ու ջինջ երկնքի տակ շողշողուն,
 «Մերթ կը ժպտի ու մերթ գոռումն արձակած,
 «Հետ ափերուն կ'խորտակուի զայրացած:
 «Ոյր կղզիներ դալար ժայռոտ ափերով.
 «Են լի ու լի Աստուածամերձ աներով,
 «Ուր այգիներ և պարտեզներ խնկալի,
 «Կը բերեն մրգեր ի գոյն բոսոր և ոսկի,
 «Ուր ժողովուրդն է քաջ, առոյգ և հզօր,
 «Ու կանանիք պարկեշտ ու ժիր գեղաւոր»:
 «Ահա, այդ է իմ սիրելի հայրենիք,
 «Ուստի բնաւ կամ տարագիր վշտով լիք,
 «Իսկ ուր ծնա նախկին անգամ շնչեցի,
 «Ծովահայացն է Արտամեստ գեղանի,

«Զքնաղ աւան բլրանխտ իւր դիրքով,
 «Հռչակ յանուն իւր մրգաբեր վայրերով,
 «Որոյ սիրուն դալարագեղ պարտեզներ,
 «Պարզած կերթան մինչև ծովու մտեզերս:
 «Այդ մրգաբեր պարտեզներու շուքի տակ,
 «Սրտիս նախկին սէրն զգացի անուշակ,
 «Գարնանագեղ կոյսին վերայ նորահաս,
 «Որ նման էր բացուող կուսին հազիւ հազ,
 «Եւ որ եղև պատճառ վշտիս դառնադէտ,
 «Որոց չեք վերջ, ոչ դուլ դադար պահ մի գէթ,
 «Իսկ մեր նախկին հանդիպելը մէկ մէկի,
 «Այսպէս եղաւ, ով մարդասէր ծերունի:

* * *

«Կենդանաբեր ժամանած էր նոր գարուն,
 «Դաշտերն էին հազած զգեստ գոյն զգոյն,
 «Արտամէտու այդի, պարտէզ գեղապանծ
 «Էին բոլոր ծաղկապսակ զարդարուած,
 «Ուր զանապան թռչուններու նուագներ,
 «Կը հնչէին մէջ ծառերուն մրգաբեր,
 «Իսկ հեռուէն ծով կապուտակ ուռնոյր, գայր,
 «Հովանաւոր հետ ափերուն համբոյր սայր.
 «Ոստազուարձ անդ ծառներու մէջ միակ,
 «Զբոսներով կը շրջէի մեղմունուակ,
 «Ուր կ'լսօսի հետ մեր սրտին ամեն բան,
 «Նորեկ գարնան անուշ լեզուաւ քաղցրաբան:
 «Կապոյտ, կարմիր, ճերմակ, դեղձան ծաղկունքով,
 «Բեռնաւորուած ոստոց մէջէն քայլելով,

«Կոյս մի տեսի կը յառաջէր հեզաքայլ,
 «Ճակտին վարդեր, կուրծքին շուշան ձիւնափայլ,
 «Ուսոյ վերայ ալեծածան հողմերէն
 «Կը ծփային խոպոպ վարսերն մեղմօրէն,
 «Շրթունք բոսոր այտեր կայտառ վարդացան,
 «Աչքունք պայծառ վճիտ աստղի մի նման,
 «Սիրտս իծոցիս յուզուած յանկարծ կ'թնդայ,
 «Երբ այդ չքնաղ արարածին կ'տեսնայ,
 «Նոր միտք, նոր ուժ, կարծեմ կառնում նոր հոգի,
 «Այդ անծանօթ աղջկանէն գեղանի:
 «Մերձ գեղանուն գտի իսկոյն վիս կանգնած,
 «Ու ասացի «սիրուն աղջիկ, ո՞վ ես դուն,
 «Հաճիր յայտնել ինձ քո անուն, քո հօր տուն,
 «Դու չե՞ս Յակոբ (թէ սխալ չէ իմ ասած,)
 «Նորոգեանցի դուստրն քնքուշ գեղապանձ,
 «Որոց մասին երիտասարդ և թէ ծեր,
 «Արտամետցին կը զըուցէ գովեստներ,
 «Թէ և լինի փաշայ դենպէտ ու մշակ,
 «Բոլոր մէկ տեղ տեսքէդ հարբած անուշակ,
 «Կարծես իրար ձեռքէ խլել կ'մրցին,
 «Դեղոյդ պսակն իւրաքանչիւրն իւր անձին:
 «Կուտի այտերն այգուն բացուած կակչի պէս,
 «Կը կարմրին այս անխոհեմ զըոյցէս,
 «Ակն կորած աչկունքն յառած դէպի վեր,
 «Նա ինձ կասէ անմեղ ձայնով «մի փնտուեր,
 «Ով դք եմ ես. ինձնէ գնա բաց,
 «Ինձնով թշուառ դու կ'լինիս անկասկած,
 «Սիպեղայի հոգով լեցուած կարծես թէ,
 «Խորհրդաւոր այս խօսքերը ինձ կասէ,

«Զոյդ խօսքերուս փափուկ թաթով մեղմաբար,
 «Սեղմած իմ ձեռք ժպիտ շրթան վարդավառ,
 «Իալարազեղ մէջ ծաղկազարդ ծառներուն,
 «Կանհետանայ ստուերի պէս նա իսկոյն:

* * *

«Բայց նա մենակ չը սրացաւ չը դնաց,
 «Միտքս ու հոգիս արդէն իւր հետն էր տարած,
 «Այդ տեսութեան վերայ անցաւ բազում օր,
 «Կոյսին պատկեր կրնկերէ ինձ դիշեր պօր:
 «Մեղամաղձիկ տխրութիւն մի երեսիս,
 «Ամենայն ժամ պատած մաշեր, կուտէր զիս,
 «Ա՛խ. . . կասէր, էլ կ'լինի գէթ հեղ մի,
 «Մօտ գեղեցիկ այդ աղջկան կանգնէի,
 «Ու լսէի նորա մոգող ձայն դաշնակ,
 «Սրտիս վառող պարզէի բոցն ու կրակ,
 «Թէև հասնէր ինձ այդ ժամուն մահու շունչ,
 «Ժպիտն դէմքիս կմեռնէի անտրտունջ.
 «Կարծես երկինք իմ սիրատարի փափագին,
 «Ու սիրահար խելճ վիճակիս տաղնապին,
 «Մտերմորէն դթոտ աչքով ակնարկեց,
 «Սիրած կուսիս դարձեալ դէպ ինձ ուղարկեց,
 «Կարծի այդպէս. . . բայց այլ կերպով ոչ նման,
 «Ուրախ, զուարդ, նախկին հեղոյն տեսութեան,
 «Երբ ծովափան մի ծառի տակ մրգաբեր,
 «Ողմած մի օր խոտի վերայ անտարբեր,
 «Կը նայէի կապոյտ ծովի փրփրուն,
 «Վէտ-վէտ, ճոճուն երթ և եկող ջրերուն:

« Ոտնաձայնի ահա շրշիւն մեղմ ընթաց,
 « Կը թոթափէ մտմտունքէս զիս յանկարծ,
 « Աչքիս հանդէպ կ'նշմարեմ այն անձին,
 « Որոյ տեսլեան անյոյս էի վերստին,
 « Դու այստեղ ե՞ս, ուրախացած ձայնեցի,
 « Թուայ տեղէս, դէպի նորան վազեցի,
 « Ձեռքէն բռնած սրտատրոփ անհամբեր,
 « Համբուրեցի նրա ճերմակ մատունքներ,
 « Ու ասացի «Իմ նուսուֆար անուշիկ.
 « Այս էր անուն օրիորդին գեղեցիկ,
 « Արի բազմենք վերայ գորգին բնութեան,
 « Որ երկնցած կը տարածուի ծովափան,
 « Երկնանկար ծաղկունքներով պարդարուած,
 « Անգիւտ ծաղիկ մի ես և դու գեղապան՝
 « Քո խօսքն, ո՞վ կոյս, զուր չէր որ ինձ ասացիր,
 « Գնա հեռի ինձնով թշուառ մի լինիր,
 « Եւ արդարև, յետ այն օրէն մշտաբուն,
 « Տարամերժած գտի սրտէս խնդութիւն,
 « Քո իսկ գեղով միշտ այրեցայ պէս հովտին,
 « Մէջ դեռ վառուած հովիւներու խարոյկին,
 « Որոնք թողած ծխուն, բոցոտ, կերթան բաց,
 « Եւ ոչ խորին, թէ կա հուրն այն, կամ էանց:
 « Հրաւէրն իմ անտես չարաւ նա բնաւ,
 « Սամիտիուելով, կողքիս մօտիկ բազմեցաւ,
 « Բայց իւր նախկին աւուր տեսքէն մերկացած,
 « Յուզուած հոգով կը դողդոջեր դալկացած,
 « Նոր կոկոնած կուրծքի տակէն հառաչներ,
 « Կը յաջորդեն մէկը միւսին անհամբեր,
 « Եւ աչերուն գեղանշոյլ պարզուած,

Արտատուելէն կերեւելին պղտորուած,
 «Հուսկ, ինձ այնպէս երևեցաւ որ այդ օր,
 «Նա եւած չէր դրոսներու կամաւոր,
 «Այլ ինչպէս նաւ տարուած բռնի հողմերէն,
 «Անդէտ թէ ուր մղուած կերթայ կուրօրէն,
 «Կամ դուժ դայլէն փախչող նման եղնիկին,
 «Որ ապաստան կ'ընդրէ մօտ որսորդին,
 «Եւ իմ կարծիքն արդարացաւ, երբ հարցի,
 «Նուսուֆայ, է՞ր դու ես այսօր տխրալի,
 «Արծաթաշող է՞ր ճակատիդ պարզութիւն,
 «Մառախլապատ երկնից ունի տխեղծ դոյն,
 «Մինչ դեռ այն օր քանի զուարթ, գեղատես,
 «Կը թռչէիր անհող, անվիշտ թռչնոց պէս,
 «—Մի դու, ինձ մի, ո՞հ այդ մասին հարցաներ,
 «Իմ աշխարհի մասն է կործան ու աւեր,
 «Սէր դդայմունք նորափթիթ մանկութիւն,
 «Ազատ կամաց, սիրայորդորն ընտրութիւն,
 «Տղմուտ, պղտոր, հեղեղի մէջ մութ, խաւար,
 «Թաթաւեցաւ, աղատուելու չկայ ճար,
 «Ո՞ր ժամանակ փառքի ծարաւ, չար հողին,
 «Ձէ վաճառած իւր հայրենիք, իւր որդին . . .
 «Անշուշտ այն օր դու կ'սիշես, երբ իրար,
 «Հանդիպեցանք տակ ծառներուն զովարար,
 «Եւ դու շօայլ շրթունքներով սիրալիր,
 «Գեղեցկութիւնն իմ ապիկար դրուադեր,
 «Ասիր, իբրեւ կը սքանչանան ինձ վերայ,
 «Արտամէտով մէկտեղ դէն պէտն ու փաշայ,
 «(Ու մահառիթ դուշակութիւն սոսկալի,
 «Որ ինձ կանէ շիրիմն ցրտին սիրելի),

«Ու յայտնեցիք, յանկարծավառ սրտիդ հուր,
 «Կարմրայ ես, սեղմի քո ձեռն, մեկնայ լուռ,
 «Ապա գրգիռ մի զգացի յիմ սրտին,
 «Տեղեկանալ, ո՞վ էր սիրուն պատանին,
 «Եւ վասն որոյ հետաքրքիր, մեղմարար,
 «Առի օրէդ հարց ու փորձել քեզ համար,
 «Երբ ասացին բարեհամբաւ ու ազատ,
 «Մի տան սերունդ ես, մի հատիկ պայազատ,
 «Վեհանձն ու կիրթ, Արամ անուն քեզ կուտան,
 «Միշտ ատեցող հարստահար վարչութեան,
 «Ուր երթայի, կամ շրջէի յար զքեզ,
 «Թէ հրասարակ և թէ տաճար, կամ պարտեզ,
 «Երկշոտ աչքով կորոնէի մշտական,
 «Մէջ ալեծուփ երթեակոյ բազմութեան:
 «Մինչ քո սիրով նորաբուլբոջ, նորախայձ,
 «Կայի բնաւ մէջ իմ անձին խռոված,
 «Ահա այսօր առաւօտեան ժամանակ,
 «Հայրն իմ կառնու հրաւերի մի տոմսակ,
 «Գիտէ՞ք յօրմէ. — Տեղոյս իշխող փաշայէն,
 «Ուրախացած անդ կ'փութա նա մէկէն
 «Յետ մի ժամէն, ապա դաձաւ, բայց փոխուած,
 «Ներքին անյայտ յուզմունքներով պաշարուած.
 «Իմ մօտ բազմաւ ու հայրենի ձեռքերով,
 «Առաւ խաղալ հետ վարսերուս գորովով.
 «Ապա ասաց. — Ո՛վ Նուհու-Քար, արդարեւ,
 «Ի ու քու հօրն ես երկնից ազնիւ մի պարզեւ
 «Եթէ ցանկաս լսել ձայնիս հայրենի,
 «Ոչ մի տիկին հաւասարել քեզ չունի,
 «Եւ ոչ մի մարդ քո հօր փառաց զուգնթաց. . .

«Ի՞նչ է հայրիկ, հարցի նորան խնդազգաց,
 «Եթէ կայ դէպք մի այդպիսի բարեփառ,
 «Որ երջանիկ կանէ զմեզ հաւասար,
 «Ես պատրաստ եմ ընդունելու ամեն բան,
 «Միայն պատուոյս և բեզ թէ չէ անարժան
 «—Արժան, չարժան հարկ չէ խնդրել իմ որդի,
 «Ուր օգտի ձայն կ'բարձրանայ ու փառքի,
 «Կարծես բոլոր այդ մեծամեծ անձինքներ,
 «Դիւրին ճամբով ձեռք են բերած այն տեղեր . . .
 «Կը խածատէ աշխարհն նոցա, մինչ այն օր,
 «Մինչ չեն հասած փափագներուն փառաւոր,
 «Ապա իրանց ժանտ ատամներ ամփոփած,
 «Դառան նոցա կամքին ծառայ դետնամած,
 «Իսկզբանէ այսպէս վարուած է աշխարհ,
 «Դատրիկ լսէ, բո հօր ձայնին սիրավառ,
 «Ու այն անձին որ կուզէ բեզ փափաքով,
 «Որոյ հետ զոյդ պիտի ապրիս լի փառքով . . .
 «—Ո՛ւմ հետ, հայրիկ, հարցի ավշած զարմացած,
 «Այդ անձն ո՞վ է, ծն, ինձ ասա բաց է բաց.
 «—Նազիր-Ղափրան. տեղոյս իշխող փաշան է,
 «—Ի՞նչ կասես հայր, բացականչել, այդ ինչ է,
 «Տենդո՞վ միթէ դու բռնուար տապախառ,
 «Մտքիդ վերայ ո՞ր մուծ պատեց, ո՞ր խաւար.
 «Ո՞վ ներշնչեց այդ առաջարկ, այդ խօսքեր,
 «Քոյ հայ անուն, պարկեշտ կոյսիս անվայել
 «—Անվայել է միթէ տեղոյս իշխանին,
 «Սրտին լինել իշխող սիրուն մի տիկին,
 «Ու հայթհայթես բո հօր համար բեկուծեան,
 «Շքեղաշուք արքասաւորն աստիճան:



6242
 A 28567

« — Ժամ մի առաջ անակնկալ քեզ կոչող,
 « Տոմսին այդ էր դարչ և գաղտնի միտքն ու սող...
 « — Այո այդ էր և ինձ յայտնեց խնդրական,
 « Խոնարհ ձայնով դենպետի հետ վեհ փաշան,
 « Որ բաղանիք երթիդ պահուն անկասկած,
 « Դէմքիդ գեղով կը զարնուի նա յանկարծ,
 « Ու այն օրէն շքեղ հարեմն ու պալատ,
 « Նորա աչքին կերևին մուտ անապատ,
 « — Բայց դու չես հայ-քրիստոնեայ, ով իմ հայր...
 « Լուսաւորչայ եկեղեցոյն սրբափայլ,
 « Հօտէն զատած, ուր ինձ առած դու յաւէժ.
 « Անդնդախոր կրնկենուս վիյ զահաւէժ,
 « Զազրաթորմի մէջ հարէմի գիճութեան,
 « Ունայնամիտ պատուի համար բէկութեան,
 « — Սէրն ազգ չունի, և ոչ կրօն բնաւին,
 « Այդ խորութիւնն է վաղեմի և ճշին,
 « Անարգ գերի հայի արեան փոխանակ,
 « Մի բարկոծելո այդ բարեբաստ քո վիճակ,
 « Լսիր քո հօր գորովագութ փափագին,
 « Լեր դու տիկին Նազիր-Ղափլան փաշային,
 « Լեր և դու, հետ օտարին պիղծ արեան,
 « Հայ արիւնն իմ չունի զուգուել յաւիտեան,
 « Եւ ոչ կարեմ ես մոռանալ սրբութիւն,
 « Հայրենաւանդ իմ կրօնին գերաբոյն,
 « Արիոյն նման թէև նա հին ամեն օր,
 « Նա կը ծագէ նոր շողերով փառաւոր,
 « Եւ քեզ օրէս չեմ ճանաչեր իբրև հայր,
 « Այլ դաւաճան. . . քո շիթ արեան ապիկար,
 « Յետ խօսքերուս նպով անէժ կարգալով,

«Մեկնա տանէն արտասուածոր աչերով,
 «Սփոփելու սրտիս տիրող դառնութիւն,
 «Մէջ ծառազարդ այս վայրերուս դալարուն,
 «Մինչ միայնակ կը փայլէի լուռ ու մուռ,
 «Տխուր, անյոյս սրտով ցամաք ու խամուր,
 «Ահա տեսի հեռուստ նորան, ում համար,
 «Հողիս կայրէր գաղանի հրով մեղմաբար,
 «Ու փութացի, հիմա քո է, ո՛վ Արամ,
 «Հէզ վիճակիս գտնել հնար մի անգամ,
 «Ո՛հ, շատ անդութ, զգացմունքէ բնազուրկ,
 «Պիտի լինիս, թէ ինձ թողնես աննեցուկ,
 «—Այն ինչ կոյսին այսպէս վշտերն ինձ յայտնած,
 «Մովի ափին կայր առ ընթեր իմ բազմած,
 «Ահա հեռուստ դաժան, անդութ միասին,
 «Ձորս պետական պաշտոնեաներ կերելին,
 «Եւ նոցա հետ ընկերացած լրբորէն,
 «Կուսին հայրը, անմիան Յակոբ անօրէն
 «Ուր մեր բազմած տեղին հաղիւ մօտեցած,
 «Խռպոտ ձայնով այսպէս յանկարծ նա գոռաց
 «—Կտի, ջատուկ ու անամօթ դու աղջիկ,
 «Միտքդ էր ընկած օտար մարդու ծոցն ու գիրկ,
 «Դորա համար տունը թողած, դուրս պրծար,
 «Ձար իղձերու սալու դու բեզ անպատկառ,
 «Հպա, ելի՛ր շուտով երթանք ուր հարկն է,
 «Ուր վեհաշուք՝ գիրկ մի քեզի կ'սպասէ,
 «—Ձոյգ խօսքերուս նման փափուկ տերեւին,
 «Խլած ոստէն խուժ դուժն հիւսիս ցրտադին,
 «Փոթորկելով առած տանի աննշմար,
 «Անօգնական կոյսին քարշին բռնաբար,

«Երթի ժամուն, Արամ, ասաց նա յուշիկ,
 «Ջիս վայելել չունի երբէք այդ պիղծ գիրկ,
 «Թէ կը սիրես ազգ ու կրօնդ, ինձ նոյնպէս,
 «Թէ անարի ուրացող մի և դու չես,
 «Ես ժանտաժուտ այն հարեմին դարչելի,
 «Ձարդ չեմ լինի, և ոչ ստրուկ սիրելի,
 «Ուշ և թէ շուտ, ինձ որ պիտի դու փրկես,
 «Եթէ հայ ես և ինձ հաստատ կը սիրես. . .

* * *

«Քանի տխուր Արտամէտուն էր պատկեր,
 «Երբ երկրորդ օր բերնէ բերան կը թռչէր,
 «Թէ բռնաբար մի հայ աղջիկ հարեմին,
 «Ընծայուած է իւր հօր կամքով լիովին,
 «Եւ փոխանակ արեան գնոյն, յիմարն այն,
 «Մշտանախատ տխուրոսն առաւ բէկութեան,
 «Ով որ լսեր կը կատաղէր, կը սոսկար,
 «Նզով, անէծք, ու հայոյեանք կը կարդար,
 «Հայ կնանիք ու աղջկունք կը կ'ողբային,
 «ՆունուՓարի բաղդին վերայ տխրագին,
 «Հայ մանկտիք, դեռահասակ ազգասէր,
 «Ազգուրացին կտրել ճգնին կենաց թել:
 «Բայց զճիւղ փափաք, անբարիշտն այն իւր գլուխ,
 «Փաշային մօտ թագուցած էր շատ կանոնիս—
 «Անմիտ և վատ, ով դու, Յակոբ Նորոգեան,
 «Է՛ր կատարիւր այդ գործն անարդ, անարժան
 «Հային և հօր: Ազնութեան տենչ, ծարաւ,
 «Նախատալից այդ սահմանին բեզ տարաւ:

«Բայց չէս տեսնիր, որ օրաւոր մի առ մի,
 «Կը թոթափին այդ տխուրոսներն յարգելի,
 «Աշնանային տերեւներու նմանակ,
 «Որոնց արդէն վաղ է անցել ժամանակ:
 «Երբ մարդկութեան սրտին մտքին միասին,
 «Եղբայր անունն, ու գիտութիւնքն ազդեցին,
 «Դու չէս դիտեր օտարի հաց քմաց մեր
 «Թէև քաղցրիկ՝ պիտի լինի դառնաբեր:
 «Ո՛վ վատ շուէր. . . Էր հորդեցիր անպիտան,
 «Կորստական այդ ճանապարհն հայոց տակ:
 «Թէև լինիս բէկ, Սատրաշամ փառքով լիք,
 «Սակայն մի օր «Նախիպ, Գովուր, Արմինիկ»,
 «Կանչելով քեզ պիտի ծաղրեն անարգած,
 «Զորս դու յայնժամ շիկնիս պիտի զայրացած:
 «Օտարին մեղ տուած այդ է վարձն ահա,
 «Փոխան արեան և մեր քրտանց անխնայ:

 «Ես որ միտամ, թէ տեսնուի տխրագին,
 «Կը փութայի սփոփելու նոյն կէտին,
 «Երբ իմ սիրած կուսին քարշին դահճի պէս,
 «Վիմատառած ես չզգացի ցաւ կարծես,
 «Հարիւր անգամ մահն իմ աչքին դեղեցիկ,
 «Երևեցաւ քան թշուառին այն խեղճ տիրք,
 «Քանի անգամ չկամեցայ սիրտ հոգով,
 «Կռուել, մեռնել արենալից նորա քով,
 «Քան թէ դիտել նունուֆարին դեղեցիկ,
 «Կոխկռտուած ինչպէս սիրուն մի ծաղիկ
 «Բայց ինչ օգուտ իմ գիտութիւն թշուառին
 «Երբ իւր արիւնն է զինք մտնող բնաւին,

«Երբ դաւաճան մի հօր ձայնն էր անդ հնչող,
«Երբ անզգամ հայմ էր բոլոր այդ գործող:

* * *

«Որպէս թռչնոյն, որոյ ձագեր փոքրատի,
«Գիւղի տղէն, կորչած բնէն կտանի,
«Դեպի իրանց փոքրիկ խրճիթ մրոտ հին,
«Մինչ թռչունը նորա յետուստ լալագին,
«Կականալիւր ձայն յարձակած մէջ օդոյն.
«Երբ փոքրիկ գողը կը ժամանէ տակ ցածուն,
«Սեռւ խրճիթին: Զագակորոյսն յայնժամ նա,
«Ողբանուագ մերթ նեղ երթին կառնու կայ,
«Մերթ գրախտին, կամ խելաթիւր որմերուն,
«Այսպէս երկար կողբայ ձագերն իւր սիրուն,
«Նոյնպէս և ես, ո՞վ հիւրասէր ծերունի.
«Նոցա ետքից լալով ընդ բարձ գնացի
«Մինչ սիրուհիս և զան գերող պաշտոնեայք,
«Անհետացան մի շինուածքի մէջ արձակ,
«Այժմիկ ուսիր, թէ որպիսի յուսահատ,
«Հոգոյս նստաւ մէք, մառախուղ մթապատ,
«Այժմիկ ուսիր, այդ վայրկեանէն, ո՞հ քանի. . .
«Այն պիղծ որմերն եղեն սրտիս սերելի,
«Բոլոր՝ երկոր, գաղտագողի, անձաշակ,
«Շուրջ շինուածքին կը թափառիմ միայնակ,
«Հանդէպ նորա լուսամտտին ու դրան,
«Կանգնած, դիտի, լրտեսեցի լռելեան:
«Գուցէ տեսնեմ Նունու-Քարին մի անգամ. . .
«Հարց տամ, առնում, ապա մեկնած բաց զնամ,

«Ապարդիւն իղձ. մահահամբոյր լուծիւն,
 «Կը տիրէ շուրջ այդ պալատան որմերուն,
 «Հուսկ՝ յուսահատ դայլի նման քանասար,
 «Յետ զուր ջանից լքած թողած տխրաբար,
 «Կերթա հեռի որմնապարիսպ փարախէն.
 «Այնպէս և ես բաց զնացի այդ տեղէն,
 «Յեղյեղելով կոյսի խօսքերն յուսադիր,
 «—Երեք օրէն դու աստ ինձի սպասիր».—

* * *

«Ո՞վ կարող էր սրտիս տազնապն հասկանալ,
 «Ո՞վ կարող էր կասկածներուս մի չափ տալ,
 «Ո՞վ կարող էր իմ անհամբեր սպասման,
 «Թուել չափել յամրազնաց ժամ, վայրկեան,
 «Երբ երրորդ օրն ծպտեալ, զինուած, անհամբեր,
 «Սանձէն բռնած ման կածէի ծովեզեր
 «Շէկ, յաղթանդամ երկվարն իմ քաջաձայն,
 «Կսպասէի Նուսուֆարի դալստեան:
 «Այսպէս երկար պատրաստի անդ սպասի,
 «Այգւոյն ժամեր կը յաջորդեն մէկ մէկի,
 «Այդեպանին պարտեզներու շուքի տակ,
 «Առաւօտեան հետ կը հնչէ երգ նուագ,
 «Ծովի վերայ հողմէն մղուած նաւակներ,
 «Կերթեկեկն այս ու այն կողմ անհամբեր,
 «Այր, կին, մանուկ իւրաքանչիւրն ըստ կամի,
 «Արտամէտու կուգան պէպ ծով կամ անտի,
 «Հարց, պատասխան, ծաղր ու քրքիչ խնդաղին,
 «Իրար խառնած դարձած կերթան միասին,

«Բայց և այնպէս, ում կապասեմ դեռ չի գար. . .
 «Ջինջ երկնից տակ ոսկի արփին լուսավառ,
 «Անցած կերթայ միջօրէից դէպի մուտ,
 «Յետ սակաւ մի կը յաջորդէ գիշեր մութ,
 «Հապա իզուր Նուսնի՞քարին կապասեմ,
 «Ասի ես ինձ, դեռ մի քիչ էլ համբերեմ,
 «Երբ որ արեգ կապոյտ ծովի մէջ թանալ
 «Խարտիչագեղ հառնու վարսերն լուսավայլ,
 «Երբ անց ու դարձ կ'դադարի այս տեղեր,
 «Անմարդացայն երբ կը լռեն պարտեզներ,
 «Երբ թռուցիկ առագաստներ ծածանին,
 «Նաւակներու կայմէն առկախ հեղագին,
 «Երբ սոխակը երեկոյեան գալստեան,
 «Համար կառնու երգարանել քաղցրաձայն,
 «Եթէ չեկաւ մեկնած կերթամ ես ազատ,
 «Յայնժամ չեմ ես ոչ ուրացող և ոչ վատ:

.
 «Ճերմակ բոլոր մինարէից բարձրաբերձ,
 «Երեկոյեան՝ ահա մօլլի ձայնն հնչեց,
 «Բարեպարիշտ միւսիլմանին ազդարար,
 «Թէ մի Աստուած է երկնից տէր, չ'կայ այլ
 «Արեւմտեան ոսկէ նշոյլ շեմեն ներս,
 «Անհետացաւ ահա արփին գեղատես,
 «Կապոյտ և լոյծ տաշտին վերայ ակօսքեկ
 «Անող լռեց նաւակներուն երթելիկ,
 «Պարտեզներու զով ու ախորժ հովանիք,
 «Ահա ծածկան ստուերապատ քօղով ձիգ,
 «Ու Արտամէտն տակաւ տակաւ խաղաղած,
 «Խոնջ գործելէն ննջեց հանգիստ լռամած:

«Յովաբնակ հարսի նման սիրածին,
 «Յուրտ ու խոնաւ ալիքներէն և լուսինն,
 «Իւր կուսադեղ դլուխն առած դէպի վեր,
 «Անուշ մեղուշ ահա կառնու ահնարկել

 «Բայց նա չի դար, դեռ չերևար, ո՛վ Աստուած,
 «Մի դէպք դուցէ պատահեցաւ անդ յանկարծ,
 «Երբ նա փախչել ուզեց բանութն ատելի,
 «Տեսան նորան, բռնած տարին, կրկնակի:
 «Վայ քեզ յանժամ, վայ քեզ, անբիծ Նոնոֆար,
 «Ել քեզ համար չունի նոր կեանք այս աշխարհ:
 «Մինչ դեռ այսպէս սրտով, մտքով աղմկած,
 «Կը տանջուիմ, ահա ստուերս մի յանկարծ,
 «Կը զարնուի լո՛ւ անորոշ տեսութեան,
 «Որ դէպի ինձ շուտ շուտ, գուգայ փութաջան,
 «Ու մօտեցած շունչը հատած դողդողջուն,
 «Արամ, Արամ, փութայ ձին բեր դու իսկոյն,
 «Նոնոֆարն եմ, եկի ահա, կը ձայնէ,
 «Մեկնենք շուտով, ժամոյս կորուստն անդին է,
 «Մինչ հարէմի մէջ կը տիրէ լռութիւն,
 «Մինչ դեռ փաշան կարծէ իւր մօտ կամ ես քուն
 «Մինչ դեռ հսկող զիշեր ու զօր անդադար,
 «Ձէ ներքինին զննած կանանց թիւն համար:
 «Ձոյդ խօսքերուն մէնք միասին ձի նստած
 «Արդէն փութով ամէն բանի սրտազգաց,
 «Արտամէտի պարտէզներուն ու ծովոյն,
 «Կարօտալից տուած յետին մեր ողջոյն,
 «Մեկնանք, անկանք կարաւանի մեծ ուղին,
 «Որ կը տանէր դէպ Վան, անտի էլ Կարին:

«Այն ներքինին, դժոխայինն, այն կերբեր,
 «Ո՛հ, չեր քնած, իմ Նուհու-Քար գեղահեր,
 «Երբ հարեմի՝ դու դրանէն դուրս ելար,
 «Նա նշմարեց ստուեր մի այդ սրավար:
 «Փութաց շուտով շամբար ձեռին լուսաւոր,
 «Առնուլ համար ննջող կանանց գեղաւոր,
 «Երբ ակնարկեց քո պճճազարդ ննջարան,
 «Անդ փաշային գտաւ քնած լոկ միայն,
 «Նա իւր տիրոջ ձայնեց քնէն սթափեց,
 «Քո փախստեան համար ասաց՝ բողոքեց,
 «Բայց ի՞նչ շփոթ և ի՞նչ աղմուկ ահագին,
 «Կանանոցի մէջ բարձրացաւ նոյն կէտին:
 «Երբ ձայն զնաց, թէ Նուհու-Քարն փախած է. . .
 «Սոթալից Փաշան իսկոյն կը կանչէ,
 «Իւր դրանիկ որեարներուն ու այսպէս
 «Կուտայ պատուէր, ո՛ն շուտափոյթ դուք տեղէս
 «Լի վրիժով, վազէք, փնտուէք ամէն վայր,
 «Գրծող կոյսին գտէք բերէք բռնաբար,
 «Անշուշտ մենակ նա չէր կարող խուսափել,
 «Թէ օգնական մի Հայ նորան չը լինէր,
 «Օգնականին անդ սպանէք չարաչար:
 «Ական թոթափ ահա յիսուն զինաւառ,
 «Զիաւորներ մեկնած կերթան այդ մթան,
 «Արտամէտու ուղինէրէն զանազան,

«Նախկին պահուն, բարեյաջող անհամբեր,
 «Մեր փախստեան երևեցաւ այդ զիշեր,
 «Արդէն լուսինն, ափսէի պէս արծաթի,

«Հորիզոնի վերայ կանգնած կը փայլի,
 «Ճանապարհի երկու կողմեր, ցիրուցան,
 «Կանգուն և լուռ ծառ որ բարեր կերևնան,
 «Նւ մեր ձիոյն արադընթաց բլտնաթոր,
 «Սալասմբակ գոփիւնն է միշտ ուժաւոր,
 «Որ կը լսուի միակերպ ու անընդհատ,
 «Աստեղազարդ մէջ գիշերին լռապատ:
 «Նւ մենք յառաջ ու միշտ յառաջ վախ ու վախ,
 «Կերթանք, անդամ չենք էլ նայիր յաջ ու ձախ,
 «Նրբ ազատուած բարեյաջող բաղտով մի,
 «Կը յուսայինք ուրախանալ մենք մեզի,
 «Ճանապարհի երկայնութեան վերայէն,
 «Ոտից թնդիւն, գէնքի կոփիւն, հեռուէն,
 «Հողմէն բերուած կառնուներ ահա յանկարծոյն,
 «Նրկիւղ սարսափ պատեց մեր հէք սլտերուն,
 «Որամ, ասաց ինձ Նոնո-Քար տխրական,
 «Յուզուած ձայով, այդ կոփ, կոփուն, ու այդ ձայն
 «Մեզ հետամուտ թշնամուն է անպատճառ,
 «Արտամէտցին մթնով չերթար ճանապարհ,
 «Թէ նոքայ են յետին գիշերն է այս մեր,
 «Արիացիր ու պատրաստէ քո գէնքեր,
 «Լաւ է մեռնել արիաբար, քան գէրի
 «Միւսիլմանի կրեց լինիլ գարշելի:
 Մինչ քաջաբար կը բարբառի նա այսպէս,
 «Ահա յետուստ փայլակնացայդ ամպի պէս,
 «Հեծեալներու մի խրոխտ խուճք երեցաւ,
 «Մեզ սախպեց թողնել ուղին շտապաւ,
 «Ապաւինել ճանապարհին մօտաւոր,
 «Բլրանիստ մէջ ժայռերին գոգաւոր:

«Սոսկանի ժամ, հարկէ կռուել քաջարար,
 «Ազատութեան ու փախչելու չկայ ճար,
 «Նազիր Փաշի դուժ և մոլի ուղարկած
 «Հեծեալներով արդէն կայինք պաշարուած,
 «Ներքուստ նոքա, վերուստ և ես անվեհեր,
 «Մէկ զմէկու կուղարկէինք գնտակներ,
 «Մինչ գիշերոյն խաղաղութիւն լռապատ,
 «Կը վրդովէնք բոմբիւններով անընդհատ,
 «Թէև նոքա բազմապատիկ են թուով,
 «Իմ թագստեան դիւքն է յարմար ասպահով,
 «Նոցա զէնքի տեղատարաւի հարուածներ,
 «Զուր կը ծեծեն իմ շուրջ պատող պինդ ժայռեր,
 «Մինչ իմիներս նոցա խմբէն անկասկած,
 «Շատեր զրկից Սադայելին խորոված:
 «Մինչ դեռ այպէս երկու կողմէն եռանդուն,
 «Երկար ժամեր պատերազմուք աննկունն,
 «Մինչ յաղթութիւնն, տարակուսած ընդ մէջ մեր
 «Զեռքի դաբնին չըզիտեր ում շնորհել,
 «Վտանգալից ու վճռական այդ ժամունն,
 «Ահա նոցա փութաց-հասաւ օգնութիւն,
 «Եւ զիտէք ով — իմ վառոթի սպառումն. —
 «Ո՛վ յուսահատ վիճակ ահեղ ու տրտում,
 «Մինչ դեռ նոցա զէնքի արագ գոմբիւններ,
 «Մէկ զմէկի կը յաջորդեն անհամբեր,
 «Յանկարծակի իմս լռեց կարկամած,
 «Ի՛նչ հանդիպաւ, Նուհու-Քարն ինձ տուաւ հարց,
 «Վառոթս հատաւ, բեկուած ձայնով ասացի,
 «Լմեցած է. — դարձուր բազուկդ դէպ ինձի,
 «Ո՛վ քաջ, ասաց մի՛ խնայիր դու բնաւ,

«Թէ սիրելի է հայ կուսիս սէրն ամբաւ
 «Դեռ բո սրբախն, այդ դաշուենով արևս հատ:
 «Մի դու ունայն կարէկցու-թեամբ խանդակաթ,
 «Դարձեալ մատներ, խնայելով իմ անձին,
 «Մօլի ու դէճ ամօթալից այն կեանքին,
 «Արիւնալից գուբ մի լաւ է ինձ համար,
 «Քան թէ կրկին ինձ բռնաբար անդ դառնալ,
 «Ես իմ ձէռքով բացած, կասեմ, զանկ սրտիս,
 «Թող ինձ խնդրողն այստեղ մեռած տղնէ զիս:
 «Մինչ այս զրոյցն դեռ շրթունքին կաղերսէր,
 «Մահուան հարուած թշուառ բազկէս ընդունել,
 «Ահա շարժած գէնիս բնաւ լըռելէն
 «Ներքուստ դէպ վեր թշնամիք մեր խուժին,
 «Ժայռերու մօտ հազիւ հասած արդէն՞ ես,
 «Արիւնարուխ վերքով, կոյսին դեղատես,
 «Մէջ ժայռերուն լքած, մեկնած էի վաղ . . .
 «Անշուշտ նորան դիակն դտան սառն ու պաղ:
 «Իսկ ես, կարծես, այդ ժամանակ քարացած
 «Կամ դիւթական զօրութիւնից կապկապած,
 «Համարեայ թէ, անցաւ, անվիշտ, նստած ձի
 «Արաբաբայլ իմ փախստեան նայեցի:
 «Մէջ անտառին որսորդներէ պաշարուած
 «Առիւծի պէս, որ բարկութեամբ բորբոքուած
 «Կուտայ՝ կառնու վէրք ո՛ւ հարուած անդադար
 «Ոչ իւր տուած, ոչ իւր առած անհամար
 «Կզգայ վերքեր, մինչ բարէբարիշդ ճամբով մի,
 «Ոսոխներու ձեռքէն թէ երբ ճողոպրի,
 «Երկիւղ, եռանդ, երբ կը թողուն գէնք դատարկ
 «Յայնժամ կզգայ իւր վերալից խեղճ վիճակ

Ու խայթուած խոր, վերքերէն մահաբեր,
 Մռնչելով կ' թնդացնէ անտառներ:
 «Այսպէս և ես մէջ վայրենի ժայռերուն,
 «Երբ շնչասպառ թողի իմ հէք զեղանւոյն,
 «Իմ փախստեան նախկին ժամերն համարեայ,
 «Անցին ցրտին, ու գրէթէ անզգայ,
 «Ապա յուշիկ, յուշիկ առի՛ զդալ ցաւ,
 «Այրող մի բոց սրտիս վերայ ծանրացաւ,
 «Լացի, կոծի, ու Նուսնա՛Քար ձայնեցի,
 «Ստրջացի, թէ էր մնացի կենդանի,
 «Յետ դահճարար սպանելէս, ախ նորան . .
 «Դաշոյն կողքիս, ինձ անդ մեռնել չէր արժան:
 «Այսպէս երկար խղճով մտքով անդադար,
 «Տանջուած միշտ անցին օրերն իմ թշուառ,
 «Մի օր այստեղ՝ մի օր այնտեղ՝ տխրօրակ,
 «Միշտ թափառուն կը տեսնէր ինձ արեղակ,
 «Եւս իրուհոյս արիւննաչանգ կերպարան,
 «Կըներէ ինձ ամենայն տեղ մշտական:
 «Հուսկ վճռեցի անդարձարար հեռանալ
 «Հայրենիքէս, երթալ աշխարհ մի օտար,
 «Ճոխ ու սիրուն իմ սիրելի Հայրենեաց,
 «Վերջին անգամ ողջունեցի մէկնայ բաց,
 «Թողած զայն տեղ մի ծերունի հայր ու մայր,
 «Հարստութիւն, տուն ու կալուած լայնատար:
 «Հինգ տարի է, որ այս տեսակ երերուն,
 «Երկրէ երկիր անբարեկամ ու անտուն
 «Կը թափառիմ, ո՛վ սիրելիդ իմ Վարդ,
 «Զը գիտեմ թէ, յուստի եկած կերթամ ո՛ւր,
 «Դորա համար է, որ լուռ կամ տխրագին,

«Ռորա համար ծանր է մի խօսք իմ մասին,
 «Մէկին ասել, կամ իմ վշտին պատմութիւն,
 «Յեղեղելով կրկնել 'ի զուր ապարդիւն»:
 Կրկարէկցին կը դորովին զգացուած,
 Նորավիպէն, թէ ծերունին, թէ իւր տունն,
 Դարձեալ յառաջ կուղան դինով փրփրուն,
 Կի բաժակներ հիւրի կենաց միասին,
 Հայր և որդիք կը դատարկեն խնդագին,
 Որ տայ Աստուած նորա սրտին հովութիւն,
 Ու նոր սիրով ցրուէ այդ հին տխրութիւն,
 Իսկ Արամը նոցա սրտի մարդասէր,
 Այդ զգացման շուղեր մնալ անտարբեր,
 Նոյնպէս լեցուն բաժակ առած կը լինի,
 Շնորհակալ, ծեր Արոյրէն յարդելի,
 Ապա նորա որդիքներէն բարէսէր,
 Որոնք իրան, իրանցմէն չէն զատեր:

* * *

Կանցնի բուքը, կանցնին օրեր մի առ մի,
 Արոյրի տանն Արամ դարձաւ ընտանի,
 Թէ տաղամարդ, թէ հարս, աղջիկ միասին,
 Եղբօր, քրոջ հոգևով նորան սիրեցին.
 Բայց Արամը միշտ առաջուայ սառնութիւն,
 Դեռ կը պահէ ամենքի հետ վարուելուն:
 Նորա սրտի վերայ մթին ամպ մի կայ,
 Որ փարատում կարծես պիտի չունենայ,
 Թէ և այնտեղ Նազենակի երեսէն,
 Խնդի, սիրոյ շողեր կարծես կը ցայտեն.

Բայց և այնպէս նա սառնասիրդ կերևի,
 Չուզեր ներքին ձայնին լսել սիրելի,
 Որ կը վազէ դէպ աղջկան գեղեցիկ,
 Թէ լուրջ, թէ քուն փափաքներով լիք ու լիք.
 Դէպ իւր աշխարհ, նա անդադար կը թռչի,
 Դէպ իւր մեռած՝ հին սիրուհին գեղանի,
 Փափաքանօք նորա շիրմի հողեր զով,
 Կուզէ սրտի կարօտն առնել, պագնելով:
 Բայց զ՛ուր փափաք, նա անզգայ բնաւին. . .
 Լուռ կը հանգչի տակ մթապատ տապանին:
 Կամիս երգէ, կամիս դու լաց, կամ խնդայ,
 Նա մեշտ դէպ քեզ ցուրտ, անզգայ կ'մնայ,
 Բայց և այնպէս ով Արամ, միշտ է անուշ
 Թանալ շիրիմ մի սիրուհոյ քաղցր յուշ:

* * *

Տկար, դժգոյն բոյսի նման, որ ձմեռ,
 Ապա կուտակ կը պահպանեն զօր գիշերի,
 Եւ մինչ քանի կը յառաջենք դէպ գարուն,
 Կը տաքանան ոսկի շողեր արևուն,
 Յուշիկ յուշիկ ու գրէ թէ անզգայ
 Նա իւր փափուկ, դալար թերթեր կը բանայ,
 Ապա յանկարծ նորա սրտէն նազելի,
 Ննջող ծաղիկ որորանը կը կախուի:
 Ահա այսպէս էր Արամի տխուր սիրտ,
 Թէ և առաջ լուիկ ու ցուրտ անխելրտ,
 Կերևի դէպ Նազինակի փափկասուն
 Դեմքէն ցոլող սիրոյ անուշ շողերուն,

Բայց օրերու առաջելուն հետ յուշիկ
 Կզգայ սրտի ցրտութեան մէջ թափանցիկ,
 Սիրոյ արփոյն ճառագայթներ ոսկեփայլ,
 Տաքցած զարթած կը բողբոջէ հեզաբար:
 Ապա մի օր, երբոր դոմի սենեկին,
 Մէջն երկուքը, բաղդով մենակ մնացին,
 Նազենակի ձեռքներ գուլպայ՝ կը գործեր,
 Իսկ Արամը ահուժին բով բազմած էր,
 Նոցա երկչոտ հայացքները մէկ մէկի
 Վերայ անուշ կառնուն նայել սիրալի,
 Այն ամօթխած սիրապատար ակնարկներ,
 Կը ծնանին մանրիկ քնքուշ ժպիտներ,
 Բայց և այնպէս անհամարձակ ու փափուկ,
 Սրտերու սէրն կամին պահել դեռ ծածուկ:
 Այսպէս երկար մէկ զմէկով զբաղուած,
 Կը մնան լուռ, ամօթանքէ խեղդուած,
 Մինչ Արամը դտած խօսքի պատրուակ,
 Կասէ, «տո՛ւր ինձ դաւաթ մի ջուր նազենակ»
 Խօսքը լսած՝ դեղեցկուհին դուրս կերթայ
 Փութանակի լի դաւաթով կը դառնայ,
 Սիրապատար ակնարկելով Արամին,
 «Ա՛ռ ջուրն ըմպէ սուրբ Սարգսի բաղարձին,
 «Խիստ ծարաւը կարծես լինէր տանջող քեզ» . . .
 Ասաց կոյսը ու կարմրաւ վարդի պէս,
 Երբ իւր այտից վերայ զգաց պատանուն,
 Փափուկ ճ՛նշում շրթուքներու բորբոքուն,
 Ու սրբազան այդ համբուրով առաջին,
 Անուշ սիրոյ բացաւ դռներ դրախտին,
 Յուստի կուգայ ընկած ու խեղճ մարդկութեան

Բուրումն անուշ իւր կորուսուած վայելման:

* * *

Այդ զոյգ սրտեր սիրոյ կրակով ջերմագին,
 Անդէն էին հալուած ձուլուած մէկ մարմին,
 Վրոյրի տուն, արդէն նոցա սրտի սէր,
 Մեծ և փոքուն ակնանդիման յայտնի էր,
 Եւ բոլորը ուրախ էին այդ սիրոյն,
 Ինչպէս Վրոյրն նմանապէս և իւր տունն:
 Մինչև մի օր, երբոր բոլորն անկասկած,
 Ընտանեկան զրոյցներով զբաղուած,
 Ուրախ զուարթ, կ'լսօսէին միասին
 Յանկարծ հնչեց լուրջ ձայնը ծէր Վրոյրին,
 Պէս կաթսայի երկնապողող փրփրուն,
 Ափ մի ցրտին ջրով ցածնու նոյն ժամուն,
 Ամէնքը մէկէն իսկոյն լռին դադարան,
 Եւ նա ասաց՝ Արամ, որդի, բաւական,
 «Է որ մնաս օտար տանէս անջատած,
 «Առանց որ է արեան կապի հաստատած,
 «Ժամանակի երկարութիւն չը դրժեց,
 «Այլ ծերունոյ փորձառութիւնն հաստատ,
 «Որ դու ազնիւ բարէբարոյ անձ մի ես,
 «Ինչպէս մենք, քեզ նոյնպէս դու մեզ կը սիրես,
 «Իորա համար այդ բոլորը նկատի,
 «Ունենալով հանդերձ է ինձ ակն յայտնի,
 «Քո և դստերն իմ փոխադարձ սէր, գորով,
 «Ուրախ եմ այդ ձեր ընտրութեան ես հողով,
 «Արդ պատրաստուի, դու նորա ձեռն ընդունել:

«Քաջ պատանոյն որպէս արժան է, վայել.
 «Եւ ձեզ օժիտ որոշած եմ, կը տրուի
 «Չորս օրավար փափուկ գետին ու բերրի,
 «Յիսուս մաքի ու երկու ձի, հինգ հատ կով,
 «Մի զոյգ գովէշ, երկու այգի հնձանով,
 «Եւ մեր տանկից, այդ ընդարձակ շինութիւն,
 «Ձեզ կը դառնայ պատրաստ շքեղ յարկ ու տուն.
 «Կօրհնեմ զքեզ, ձեր ընտրութիւնն ու գորով,
 «Լինէք յաջող, խնդաք որդով թոռներով:
 «Արդէն իմ էլ կենացս արւն մայր մուտ է,
 «Մահը դրան կանգնած ինձի կսպասէ,
 «Մահը ոչինչ, դուք ինձ լսէք, որդիներ,
 «Այդ մի պարտք է որից հնար չէ խուսափել,
 «Այլ դառնադին նա ինձ յայնժամ կը լինի,
 «Երբ դուք սիրով չէք ապրի հետ մէկ մէկի:
 Ասաց լուց նահապետը: Տանեցիք,
 Ուրախացան այդ որոշման գեղեցիկ:
 Նազենակը իւր հօր խօսքերն իմացած,
 Ամաչելով այդ խմբակէն դուրս գնաց,
 Իսկ Արամը երախտագէտ լի սրտով
 Կը համբուրէ ծերի ձեռքը յարգանքով:
 Ընտանեկան այդ շրջանի մէջ սիրուն,
 Իսկոյն կուգան լի բաժակներ փրփրուն,
 Անուշ գինին կառնէն ըմպել միաշար,
 Պաղատելով որ տայ երկինք դեռ երկար,
 Հովանաւոր կաղնու նման դարաւոր
 Վայելելու ծեր Վրոյրին բազում օր,
 Իսկ Արամի, Նազենակին քաղցրահամ,
 Օրեր կենաց ու ապայգայք անթառամ:

Նազինակի և Արամի սրտերուն,
 Սիրոյ վիճակն պարզեց ծերի հաճութիւնն,
 Արդէն նոքա ապահոված բնաւին,
 Որ մէկ մէկու համար պիտի ապրէին,
 Մի քանի օր յետոյ իւրեանց գեղեցիկ,
 Կը կատարուէր սիրազեղուն հարսանիք,
 Նազինակի ուրախութեանն շափ չկար,
 Որ այնպիսի սիրուն փեսայ կունենար,
 Իսկ Արամին, որ իւր սրտի վերքերուն,
 Նազինակով կուզեր գտնել ողջութիւն,
 Իսկ հարսանեաց, ինչ որ պէտք էր, պատրաստ էր.—
 Ու պսակման կարապետող գիշերն էր,—
 Տարագրեցաւ անոյշ քունը աչերուն,
 Արամի սիրտն գարնան պղտոր ջրերուն
 Նման յուզուած առաւ իւր մէջ փրփրել,
 Զարթան այն տեղ, ա՛խ, հեռաւոր շատ մտքեր...
 Կենդանացաւ այնտեղ անուշ պատկեր մի,
 Կարծես զղջաց, մեղքէր գործածն սոսկալի,
 Երբ նոր սիրով գտաւ իւր սիրտն բռնուած
 Երբ իւր հին սէրն պիտի մնար մոռացուած,
 Ու նորանէն հրաժարուած յաւիտեան,
 Պիտի ապրեր հետ Վրոյրի աղջկան,
 Բայց ի՞նչ անէր հէք ու թշուառ պատանին
 Հնազանդել հարկ էր անգութ կոյր բաղդին,
 Մինչ վրդովուած կը տանջուէր այս գունակ,
 Ա՛խ կը քաշեր ու կարտասուէր միայնակ.
 Այսպէս նա իւր վերջի հառաչն ու ողջոյն,
 Տուաւ անուշ իւր մեռանող սիրուհոյն:

1.

Իմ Նունուֆար թողմար դու վաղ,
 Սրտես հագնել չունին ան վախ.
 Հողիս շիրմիտ հետ անուշակ,
 Պատի մնայ կեց ու անքակ,
 Մնաս բարեաւ իմ Նունուֆար,
 Այլ ևս չենք տեսնել իրար:

2.

Անգութ բաղդին հնազանդայ,
 Իմ ձեռքով բեզ դահիճ դառայ.
 Թէպէտ հիմայ դու մեռած ես,
 Մեռնողն ես եմ և ոչ դու ես,
 Մնաս բարեաւ իմ Նունուֆար,
 Այլ ևս չենք տեսնել իրար:

3.

Բեկաւ ոստը կանաչ, ծաղկած,
 Որի վերայ բոյնս էր շինած.
 Հարկադրուայ օտար աշխարհ,
 Տանել երգոյս անուշ քնար,
 Մնաս բարեաւ իմ Նունուֆար,
 Այլ ևս չենք տեսնել իրար:

4.

Սիրտս է թափուր, հողիս տխուր,
 Բեզնից չի գար էլ ինձի լուր.
 Այդ տխրութեան շուքի ներքեւ,

Մի դժգոյն վարդ բացեց տերև,
 Մնաս բարեաւ իմ Նունու-Քար,
 Այլ ևս չենք տեսնել իրար:

5.

Ներող եղիր օրէս յետոյ,
 (Այս ընտրութեան ինքս եմ դժգոյն)
 Թէ սոխակիդ օտար վարդի,
 Համար սիրտը յանկարծ կայրի,
 Մնաս բարեաւ իմ Նունու-Քար,
 Այլ ևս չենք տեսնի իրար:

6.

Բայց և այնպէս մի՛ վախենար,
 Նա քեզ բնաւ չի մոռանար.
 Աշնան ծաղիկ, գարնան ծաղկի,
 Հետն ընթանալ բնաւ չունի,
 Մնաս բարեաւ իմ Նունու-Քար,
 Այլ ևս չենք տեսնիլ իրար:

7.

Կասկած չունիմ, ինձ մահ չկայ,
 Եթէ օրհասն իմ փութայ գայ:
 Քո սրտիս մէջ թողած վէրքով,
 Պիտի մեռնեմ ծաղիկ տխով,
 Մնաս բարեաւ իմ Նունու-Քար,
 Այլ ևս չենք տեսնել իրար:

8.

Արատմէտու այգի, պարտէզ,

Արտ ոսկէփունջ, մարդ գեղատես.
 Են սիրելի իմ սրտին յար,
 Յուստի քայլեր անցար դարձար,
 Մնաս բարեաւ իմ Նունուֆար,
 Այլ ևս չենք տեսնել իրար:

Այսպէս երգած՝ կը լռէ նա, բայց հոգին,
 Կերերայ դեռ հողմէն շարժած պէս թփին,
 Ապա յողնած լացէ, վշտէ ու թմրած,
 Բարձի վերայ կառու ննջել ընկողմած,
 Կարծէ տեսնել... ու կը տեսնէ գեղանի,
 Իւր սիրուհին ձեռքին բռնած ձիթենի,
 Ոստ մի դարար, սովորական ժպտով,
 Զուարթալից կը մօտենայ իրան քով,
 «Ո՛վ իմ Արտ» կասէ, ձայնով անուշիկ,
 «Մի՛ դառնանար, մի դու տխրիր ցաւով լիք,
 «Բո՛ Նունուֆարն եմ, ահա ես ողջանդամ,
 «Կայտառ, սիրուն ծաղկի նման անթառամ,
 «Բազկիդ զարկէն չմեռայ ես, մի՛ վախեր,
 «Դեռ իմ կեանքը ունի երկար շատ օրեր,
 «Դու մի՛ ողբար, մի՛ արտասուիր ինձ համար,
 «Մենք վերջն դարձեալ կը ժողովինք մօտ իրար,
 «Այդ բո՛ արդի ուրախալից հետ բաղդին,
 «Է՛ր կը խառնես լեղի մրուր դառնագին,
 «Դնայ ուղին որն որ պատրաստ կը գտնես,
 «Մահկանացուի միտք չէ այնքան հեռատես»:
 Մինչ դեռ Արամ հին սիրուհին կենդանի,
 Տեսած՝ յանկարծ ու զարմացած կ'հայի,
 Նորա ձայնի քաղցրութենէն դրաւուած,

Ձի գիտեր թէ, ինքն ի՞նչ ասէ, ի՞նչ տայ հարց,
 Մինչ խնճղալից ու այլ այլած կը մնայ
 Ինքն իւր անձին մէջ զինք ժողուած՝ կը փութայ
 Հասու լինել, թէ իւր տեսածն իսկական
 Նուսուճարն է թէ ուրուականն մի միայն.
 Որ իւր յոգնած զգացմունքներն արթնցած,
 Առաջ բերին, մինչ ինք քնով կայ պատուած:
 Նա այս գունակ կը մտածէր մէջ քնոյն,
 Ահա մի ձեռք կորորէ զէնքն յանկարծոյն,
 Դաշն ձայնով, այսպէս կասէ սիրալիւր,
 Զարթիր, զարթիր, իմ սիրելի դու զարթիր.
 Ուրախութեան մեզ օր ծագեց գեղատես,
 Մինչ երբ այդպէս քնով թմրած դու ննջես:
 Բացած աչերն նազենակին իւր դիմաց,
 Կը նշմարէ հազած կապած ու կանգնած
 Եւ հարսանեաց թմբուկներուն փողերուն,
 Կառնու ձայնը փակ Վրոյրի յարկերուն

* * *

Քաղաքներու մէջ հարսանիքն յատնի է,
 Հասարակաց ուրախութեան առիթ չէ,
 Նորա ունին մեծակառոյց թատերներ,
 Հասարակաց նուագածու մեծ խմբեր,
 Հազար ու մի զուարճութեան տեղ ու տուն,
 Ուր մարդու սիրտ կարէ գտնել հաճութիւն,
 Իսկ գիւղերու հարսանիքի խինդ, հանդէս,
 Կը պատկանի ամէն մէկին-ի՞նչ կարծես,
 Բաւական է, որ թմբուկի դովդովիւն,

Հետ փողերու ձայնին լսուաւ դոռ հնչիւն,
 Երկտասարդ, հարս ու աղջիկ միաբան,
 Գէտ հարսանեաց այդ հանդեսին կ'փութան,
 Ուր որ արդէն հրաւիրեալք ու տան տէր,
 Զուարթալից պսակաձև պար բռներ,
 Մերթ երազուն ու մերթ հանդարտ ըստ հնչման
 Գուսանական ձայնին յարմար կը խաղան:
 Գինու շիշեր ու ցքին դառնահամ,
 Կըթխաներով կը պարպուին շատ անգամ,
 Երդոց ձայներ ու խնդութեան աղաղակ,
 Ծիծաղաշարժ խօսք ու զրոյց և առակ,
 Եռանդալից սրտի աղերս օրհնութիւն,
 Իրար զուգուած կ'բարձրանան մէջ օդոյն:
 Ահա այսպէս Վրոյրի տան մեծահաց,
 Էին արդէն այդ հանդէսին ժողոված,
 Առաւօտեան նոր ծաղման հետ խար գիւղի,
 Բոլոր մարդիկ հարս ու աղջկունք մի առ մի,
 Կը ճաշէին, կ'պարէին խնդալառ
 Գինու շիշեր կ'պարպէին անհամար,
 Երբ արթնցուց Նազենակը Արամին,
 Որ խոր քնով ըկղմած էր 'ի բարձին,
 Մէջ առանձնեակ իւր սենեկին դժուծ, ցած
 Մի օր այդպէս ծանր քնով չէր քնած,
 Ու զգիցոյց նորան շքեղ հանդերձներ,
 Որպէս հարսի և փեսայի վայել էր:
 Ընկերացած աղապներով, կոյսերով,
 Նման մի փունջ կապուած դունդու ծաղկունքով,
 Ամոլին այդ զոյգ, մէջ բաղմութեան կերևին,
 Որոնք «կեցցէ մեր թաղաւոր, թաղուհին»

Խառնադղորդ աղաղակով կորոտան,
Ապա երգով ու հանդեսով միաբան,
Եկեղեցին պսակելու կը տանին,
Ուր օրհնութիւն մնայր նոցա երկնային,
Առնուլ ձեռքով քահանային, որ վաթսուն,
Տարիներով անցուց իւր կեանք սրբասուն:

* * *

Արդէն Արամն Նազենակին լծակից
Արդէն նոքա էին սիրով գրկակից,
Արդէն նոքա տան և հոտի, այգիի,
Ու կենդանեաց տէր են, նոյնպէս և գետնի,
Արդէն Վրոյրն ու իւր ողիք, տանեցիք,
Ուրախ էին այդ հասութին բարւոքիկ,
Ու ամենքը բարեբաստիկ, կղձային,
Լաւ ապագայ ժառանգներով միասին,
Նորապսակ այդ սրտերուն սիրավառ,
Որ չ'տեսնեն ոչ մի վատ օր ու թշուառ:

* * *

Քանցը է աչքի, քաղցր է սրտի և նոյնպէս,
Գերդաստանին երիտասարդ գեղատես
Մի հօր դիտել, երբ նա սիրուն պարկեշտիկ,
Հետ լծակցին շրջապատուած փոքրոզիկ՝
Մատաղահաս մանուկներով փափկասուն,
Մերձ ակութին ձմերան խիստ ցրտուն,
Զիթենոյ պէս կանգուն դալար հասակով,
Շուրջ բոլորած նորաբողբոջ ոստերով:—

Կամ մինչ դարունն, նոր արեգակ հետն առած,
 Կիսադնդին մեր երբ երած դուդայ այց,
 Գիդել դարձեալ ծաղկածաւալ պարտեղին,
 Անուշաբոյր հովանեաց տակ խմբովին,
 Որ կղբոսնու, նա ճեմելով հանդարտիկ,
 Ու դորովով կ'լսէ ձայն իւր գողտրիկ,
 Զադուկներուն՝ խառն թռչնոց ձայներուն,
 Որ կը երգեն բազմած ծառոց ոստերուն:
 Զուարթալից նա կակնարկէ բնութեան,
 Գէմբին պարզած դեղեցկութիւն վարդացան,
 Զուարթալից նա կակնարկէ անուշիկ,
 Գարնան նման իւր ամուսնոյն դեղեցիկ,
 Զուարթալից նա կակնարկէ սրտադող,
 Իւրան մեղիկ որդոց վերայ վազ վազող
 Գալարութեան վերայ՝ որոնք կերերան,
 Հողմէն շարժած ծաղկած նման հոտեան:
 Կը մոռանայ այդ ժամանակ, սրահ մի նա,
 Ցաւոց փշերն կենաց ճամբան ցանուած կայ,
 Կը մոռանայ, որ խնդութեան բաժակին,
 Ըմպէլէն ետք տակն է մրուր դառնադին,
 Կը մոռանայ որ մեր ճակատ վարդարող,
 Առաւօտեան յայսմիկն ու վարդ վառ վառող
 Երեկոյեան պահուն դժգոյն ու խամրած,
 Կը թոթափին մեր բոլորիկ գետնամած,
 Կը մոռանայ որ այն դարնան նմանակ,
 Կը կորսուի և մերն անդիւտ ժամանակ:
 Ահա այս դոյն հայրերից մէկ կերէէր,
 Այդ մեր դիւցազն, ո՛վ ընթերցող բարէսէր,
 Քառեակ որդով նորա սեղան բոլորաւ,

Նորան պատից հարստութիւն ու համբաւ,
 Եօթնեակ դարուն, եօթնեակ ամառ միասին,
 Նազնակի հետ վայելից խնդադին,
 Եօթնեակ դարնան առաջի վարդն հնչեցին,
 Եօթնեակ ամռան ոսկի ողկոյսն կթեցին,
 Եօթնեակ անգամ ատօք հասկեր դաշտերուն,
 Կարմրեցան հանդէպ նոցա աչերուն:

* * *

Ահ դանն է, դանն, մինչ դեռ, խաղաղ, հանդարտիկ
 Ծովի վերայ նաւը կերթայ բացաձիգ:
 Վերեն երկինք, վճիտ, պայծառ, անուշ օդ,
 Ներքեն հանդարտ ծով ծածանուտ, ծիծաղկոտ,
 Եւ նաւաստին իւր նաւակի ժամանման,
 Յոյսով կերգէ անհոգ՝ ձայնով խնդութեան
 Ահա յանկարծ կապակոտոր խիստ հողմեր,
 Ամէն կողմէ կառնոււն ահեղ մռնչել,
 Վճիտ, պայծառ երկնից պատկեր դեղափայլ,
 Կը ծածկուի խիթ ամպերով մութ մռայլ,
 Ժպտող ծովը մոլեգնոտած ահադին,
 Իւր սահմանէն դուրս կ'փախչի զայլադին.
 Այս ահարի նման, որոյ բերան բաց,
 Լորձունք, փրփուր անտի ժայթքէ կատաղած:
 Կը պատառին առազաստներն հողմերէն,
 Կը խորտակուի կանգուն կայմը մրրկէն,
 Մերթ կ'տեսնի հեք նաւաստին ինքն իրան,
 Կոհակներու վերայ ահեղ բարձրութեան,
 Եւ մերթ իջած անհուն ծովի մութ յատակ,

Շուրջ ջրեղէն խոր ձորերով շրջափակ,
 Մինչ զեռ կորած կ'համարի նա իրանձ
 Խորասուզուած անհետ, անյոյս ու անդարձ
 Ահա երկինք այդ կորստեան ժամանակ,
 Կը պարզուէ յանկարծ նորան՝ չոր ցամաք,
 Ուր խորտակուած նաւը կողքայ նա պահ մի,
 Ապա մեկնած կերթայ օփէն ամայի:
 Այսպէս իջաւ խեղճ Արամին յետ եօթնեակ,
 Տարիներուն զուարթ ամերը յաջողակ,
 Ապա նորա երջանկութեան նաւի շուրջ,
 Զախորդութեան փչին հողմերն խստաշունչ,
 Ծուէն, ծուէն առագաստներն վայր ընկան,
 Խորտակեցաւ նորա ամուր կայմ, պարան:

* * *

Մառ ժամանակ չէր սոսկալի հրէշ մի,
 Կաղզվանու զիւզելու մէջ կիրևի,
 Զօր ու զիշեր նա իւր հսկայ ոտքերով,
 Գիւղէ ի գիւղ ու տանէ սունն փոխուելով,
 Աւարելով կը թափառի անդադար,
 Տուն ու խրճիթ, նա և տեղեակ պերճափառ:
 Մարդկանց վերայ նա գութ չունի բնաւին,
 Գեղեցկութիւն նորա աչքին է ջնջին
 Ոչ արտասուք, և ոչ անդերս վշտահար,
 Կաղզէն նորա անմարդասէր սրտին քար,
 Ոչ սեռ, ոչ ցեղ, երիտասարդ կամ թէ ծեր,
 Նա իրարուց բնաւ խտրիլ չզիտեր:
 Ինչ հարուածով որ կը կտրէ թել կեանքին,

Խորշում երես ու անպիտան պատաւին,
 Դարձեալ նոյնով գողտրիկ կոյսին գեղանի,
 Կը զըաւէ կենաց յոյսէն սիրելի:
 Բաղդաւորի ու թշուառի սեղաններ,³
 Նոյն ախորժով նա կայցելէ անտարբեր,
 Նորա համար զոհ չի պակսեր ոչ մի վայր,
 Մէկ սեղանէ նա չի գիտեր յագենալ,
 Նորա անուան երկիւղ, սարսափ, տեղ է տել,
 Պտըտուելով եկաւ հասաւ մինչ Խար գել:
 Եւ ինքն նոյն իսկ, իւր համբաւի ետեւէն,
 Ներս կ'մտնէ փոքրիկ գիւղի դռներէն,
 Տեղոյն բոլոր բնակիչներ սարսափած՝
 Տխուր ու թոյլ ձեռք ծոցերուն անփոփած:
 Այդ անողոք աւարառու հրեշին,
 Հետ չը գիտեն ինչպէս արժան է վարուին:
 Որովհետեւ նա ոչ ոքի չի ուզեր,
 Իբրև տանտէր, կամ իբրև հայր ճանաչել,
 Ուր որ իրան մտքի մագնիս կը տանի,
 Այն տեղ իսկոյն առանց արգել կը մտնի,
 Մէջ տանեցոց կը հնչէ լացն ու բողոք,
 Նա անողորմ սրտով անգութ անողոք,
 Աւարելով կը թողու իւրն զկնի,
 Տունն անապատ ու տանեցիք սգով լի:
 Ահա այսպէս ամառնային իրիկում,
 Երբ սեղանի շուրջ բոլորած անտրտում,
 Բարէբաստիկ Արտամէտցին կըձաշէր,
 Հետ իւր որդոց ու կողակցին գեղահեր,
 Յանկարծ նոցա սեղանի մօտ կը կանգնի,
 Աշխարհաւէր այդ հրեշը վիթխարի,

Կամախք դառած, դէմքով նիհար ու դեղնած,
 Երկար մազեր դէմքին, գլխոյն խճճուած,
 Հաստ շրթուներ, շունչ գարշահոտ մահացան,
 Ձեռքին բռնած անհարթ անկոկ մի մական,
 Գծոխային հրով վառած աչերով,
 Ընթրողներուն նա կակնարկէ շրջանով,
 Յանկարծ նորա աւագ որդին կը գոչէ,
 Վեր թռչելով նստած տեղէն—այս ինչ է...
 Ո՞վ ինձ զարկեց ինչ կը լինիմ... ո՞վ Աստուած.
 Այ հուրն յնւտի վառաւ ծոցիս մէջ յանկարծ,
 Օղնեցէք ինձ, ոհ կը մեռնիմ ես... անի հայր...
 Միթէ՞ ցաւիս բնաւ չկայ ոչ մի ճար,
 Նոյնպէս եկրորդ ու երրորդ և չորրորդ,
 Հուսկ իւր անիւ նաղենակը սիրով յորդ:

 Տարարողդ հայր ամուսին հեք յարակայ,
 Չրդիտէ թէ, ում խնամէ և ում լայ,
 Անդ դարկացած ու մահամերձ որդին է,
 Որ օղնութիւն մի հօր սրտից կ'աղերսէ,
 Աստ իւր սիրու մտերմութիւն փարեղի,
 Որ ժամ է ժամ ծաղկի նման կ'սամբի:
 Վեց օր ետոյ՝ դրօշ պարզած յաղթական,
 Իւր հետ առած հինգ հատ դադաղ տխրագին,
 Անգութ հրեշն, այն ժանտախտը ահագին,
 Կոծով լցած տնէն կերթա Արամին,
 Թողած այնտեղ լոկ կարճատև սիրոյ մի,
 Յիշատակը, միշտ տոչորող սիրտ հոգի:

Խեղճուկ Արամ, ո՛հ որպիսի դժնդակ,
 Չարագուշակ դու մի աստեղի ծնար տակ,
 Է՞ր անողորմ ճակատագիրն միշտ զքեզ,
 Սուր ցաւերով կ'հալածէ մշտապէս:
 Քո աշխարհէն նա քեզ հանեց տարագիր:
 Քեզ շրջեցուց անապատներ լայնալեր,
 Հուսկ կարծեցիր Քար գիւղի մէջ մոռացուած,
 Գտնել հանգիստ, լինել և հայր ընտանեաց:
 Բայց և այնպէս մոլորած դու, նա քանդեց,
 Քո նաւակիդ թու՛մք ու պատուար՝ բարձրաբերձ,
 Լի ցաւերով ինչպէս եկար դու միայն,
 Այնպէս դարձեալ պիտի թողնես Կաղզուան,
 Եւ յուշարար յիշատակեդ հեռաւոր,
 Պիտի մնար հինգ շիրիմներ սգաւոր:
 Ճշակոտոր խիստ հողմերէն դժնդակ,
 Ծառի նման մնաց Արամն միայնակ,
 Տանից այգի, այգիէն տուն ու դաշտեր,
 Մորմոքելով նա կ'ըջէր զօր գիշեր,
 Չազակորոյս զերթ մի կռուենկ ողբաձայն,
 Որ կ'թռչի մէջ գիշերուայ մթութեան,
 Պահ մի կողբայ՝ Նազենակին պարկեշտիկ,
 Պահ մի մանրիկ նաշխուն ձագերն անուշիկ,
 Պահ մի նոցա շիրիմներուն կերթայ տես,
 Նոցա հողին նա կը բսէ, աչք երես,
 Անդ թողած սիրտն, ինքն կը դառնայ դէպի տուն
 Տխուր, տրտու՛մ, յուշիկ քայլով դողդոջուն:

Այսպէս երկար անցուց օրեր վշտալի,
 Ձեռաւ նորան սփոփելու հնար մի,
 Նորա կերած, նորա ըմպած ջուրն ու հաց,
 Արտասուքով էր մշտապէս խառնուած:
 Խոհուն, լռիկ յար միայնակ կը քայլեր,
 Ոչ որբի հետ չէր կամենար խօսակցել,
 Միայն մտքով տյս կաւեղէն մեր աշխարհ,
 Թողած՝ կերթար դէպի երկինք լուսափայլ,
 Ուր կը գտնէր իւր վաղճանած սիրելիք,
 Զուարթադէմ ողջ կենդանի գեղեցիկ,
 Անմահական դրախտի մէջ յարակայ,
 Անդ երգելով զուարթնոց հետ Ռվանայ,
 Յաւելլժութեան շուրջ աթոռին բոլորած
 Զեռքեր քնար, իրանք վարդով պսակուած:
 Ապա փոքր ինչ մխիթարուած իբրև թէ,
 Որդեկորոյս հայրիկն ինք զինք կը կարծէ:

* * *

Հուսկ կը տեսնի որ իւր վիճակն օր աւուր,
 Անտանելի դարձաւ թշուառ ու տխուր,
 Արդէն վաղուց իւր բարերար ծերունին,
 Իւր այս աշխարհ փոխած էր հետ երկնքին:
 Կոչեց մի օր իւր աներձագ-եղբայրտիք.
 Այսպէս բացեց սրտի խորհուրդն ու գաղտնիք. —
 — «Անդութ բաղդը, ո՞վ եղբայրներ բարերար,
 «Կը տեսնեմ որ չ'կամեցաւ ինձ համար,
 «Որ բարեբաստ կենաց օրեր ունենամ,

«Երկնքի տակ պահ մի ուրախ ես մանգամ,
 «Քանի տարի ձեր քրոջ հետ ապրեցայ,
 «Քնքուշ, սիրուն զաւակներու հայր եղայ,
 «Գլխէս անցած բոլոր վշտեր մոռացած,
 «Նազենակով միայն գտայ սփոփուած,
 «Ու մեր բաղդին և ոչ մի բան թերի չէր,
 «Այլ վայելման միայն օրեր պիտոյ էր,
 «Տուն, անասուն, այգի, պարտէզ, դաշտ ու անդ,
 «Ձոր շնորհեցիք առատաբար սրտիս անդ,
 «Ա՛խ, ի՞նչ օգուտ, երբ Նազելիս կորուսի,
 «Երբ զըկուեցայ որդիքներէս գեղանի,
 «Այդ կալուածներն, որ ինձ առաջ կազդէին,
 «Ուրախութիւն՝ այժմիկ վիշտէն դառնագին,
 «Ահա ձեզի կը դարձնեմ ես նոքա,
 «Ձեզ կը թողում, ինչ որ ունիմ, ինչ որ կայ,
 «Բացի իմ հինգ շերիմներու կարօտէն,
 «Որոնք մտքէս ելնել բնաւ չը գիտեն,
 «Ինչ երկնից տակ որ ես ապրիմ, նոքա յար,
 «Նուիրական կանդեղի պես մշտավառ,
 «Պիտի փայլին մէջ հէք սրտիս մթութեանն
 «Մինչ իմ կեանքիս սպառի ժամն ու վայրկեանն.
 «Միայն ձեզնից սա կաղերսեմ ես այսօր,
 «Ինձ դարձուցէք ժանգոտ զէնքերն իմ բոլոր,
 «Եւ դուք ինձի մրրկաշունչ նժոյգ մի,
 «Որ աշխարհէս տանի ինձի շատ հեռի:»
 «Երթող եղբօր ու փեսային վշտասուն,
 «Ընդունեցէք վերջին համբոյրն ու ողջոյն:
 Ասաւ, մեկնաւ առած միակ իւր զէնքեր.
 Գնաց դատարկ, որպէս դատարկ եկած էր,

Միայն վշտեր յաւելցուցած իւր սրտին,
 Նորան տուած բաժինն այդ էր Խար գիւղին:

* * *

Աշնան դժգոյն արեգակ մի դալկացած,
 Կը նշողէ լեռան վերայ բարձրացած,
 Ծածկուած են մառախուղի քօղի տակ,
 Լեռ ու բլուր, խամուր դաշտեր տափարակ,
 Աշնան ցրտէն տերեւաթափ այգիներ,
 Զուրկ են թռչնոց երգի ձայնէն խնդաբեր,
 Եւ ոչ ոսկի խիտ հասկերով ծովի պէս
 Կը ծածանին բերրի արտեր գեղատես:
 Ահա այդ ժամ միակ կերթայ հեծեալ մի,
 Այգիներու ճանապարհէն փոշելի,
 Նորա դէմքն էր մուրթ ամպերով ծածկուած,
 Նորա աչքերն արտասուքով լճացած,
 Նորա սրտի մէջ բիւրաւոր դաշոյններ,
 Բանան անբուժ արիւնաբուխ խիտ վէրքեր,
 Երթի ժամուն նա պահ ընդ պահ դառնալով,
 Կը հայի յետ դէպի Խար գիւղ կարօտով,
 Բայց ակնարկման ժամանակին, ո՛հ ի՛նչեր . . .
 Չեն դար երթար նորա սրտէն վշտաբեր:
 Սիպիւրիայի աքսորելոյն նմանակ,
 Որ իւր վերջին կուտայ ողջոյն տխրորակ,
 Դաշտին ու տան ու ինք ընաւ խաղաղիկ,
 Ուր կ'թողու իւր վշտացած սիրելիք,
 Բայց մահապարտ սիպիւրացին կսփոփուի,
 Որ կենդանի սիրելիներ կը թողնի,

Որոնք իրան պիտի յիշեն սիրավառ,
 Ընտանեական շրջանին մէջ անդադար:
 Բայց դա ոչ դք չունի յիշող իրան անդ,
 Բացի հինգ հատ շիրիմներէ ապա բախդ:
 Ու մեջ ասել, աւելորդ է ընթերցող,
 Թէ Արամն էր այդ աքսորեալն ու երթող:

* * *

Տասն գիշեր ու տասն զօր մշտական,
 Շարունակեց նա իւր ճամբէն դէպի Վան:
 Տասն և երկու արդէն երկար տարիներ,
 Անտի մեկնած օրէն էին վաղանցիւր:
 Այդքան տարի իւր սիրելի հայրենեաց
 Գրկէն ոչ լուր և ոչ թղթիկմ էր առած,
 Քանի՛ անյադ, նա չէր ցանկայ փափաքով,
 Դարձեալ տեսնել ժամ մի յառաջ Վանայ ծով,
 Դարձեալ տեսնել Արտամէտու պարտէզներ,
 Որոց ներքև նախկին անգամ շնչեց սէր,
 Դարձեալ տեսնել այն հայ սրտեր սիրական,
 Որոց դեռ քով կը ծածանէր իւր անուան,
 Յիշատակը, մայր մտնելէն զկնի,
 Արեգական վերջալուսոյն պէս ոսկի:
 Գուցէ մի բան էլ անտեսնել նա ցանկած,
 Անարտասուք մի հողակոյտ մոռացուած,
 Լքուած, թողուած այնքան տարի անխնամ,
 Որոյ ծածկեն վայրի խոտեր ամէ ամ:
 Հուսկ տասն և մի աւուր ծաղողն արեգակ,
 Նա կողջունէ իւր մայրենի երկնից տակ,

Կողջունէ նա կանգնած դարի վերայէն,
 Արտամէտուն, կապոյտ ծովուն, հեռուէն,
 Որոնք զուարթ կուգան հանդէպ աչերուն,
 Կնչպէս էին իւր մանկութեան օրերուն,
 Յուզուած հոգևով կ'բառբառի նա այսպէս,
 Հետ հայրենաց իւր քաջափառ, դեղատես:

1.

Իմ հայրենիք քաղցր և յարգոյ,
 Տասն և երկու տարուց յետոյ.
 Ահա դարձած դուգամ դէպ քեզ,
 Ընդունէ զիս զթոտ մօր պէս:

2.

Աքսորելոյն ուրախութիւն,
 Չկայ օտար տակ աստղերուն.
 Կեղծ ժպիտով զուր յարդարել,
 Կղձայ նա իւր դէմքին պատկեր:

3.

Միայն հանգիստ ու խնդութիւն,
 Նա կը գտնի իւր մօր սիրուն
 Թւերու տակ, երբ զերթ պսակ,
 Կը բողբոլին ճակտին ճերմակ:

4.

Տո՛ւր ինձ, դո՛ւ, տո՛ւր, շնչոյդ անուշ,
 Ծնչել զնփիւռ մաքուր բնքուշ:

Տո՛ւր ինձ, դու տո՛ւր պարտէզներդ,
Ծծել հով զով՝ մայր բաղարազութ:

5.

Տո՛ւր ինձ, դու տո՛ւր, քո ուրդոց հետ,
Սիրել զքեզ միակ, յաւետ,
Նոցա մէջէն մի մօր փառքին,
Զը լինիմ ես սիրուին յետին:

6.

Տո՛ւր ինձ, դու տո՛ւր, յօժարակամ,
Որպէս մի ձօն, ջինջ անթառամ,
Քո սերլանոյն սրբանուէր,
Իմ տալ կենաց սիրունն օրեր:

7.

Եւ դարձեալ տո՛ւր տխուր, ներեալ,
Ոսկորներուս խաղաղ մի վայր,
Ծոցիդ կակուղ՝ մէջ հողերուն,
Հանգչիլ անդորր մահու ցուրտ քուն:—

8.

Եւ դու ո՛վ ծով իմ վեհափառ,
Որոյ եղեր այնքան երկար,
Կը սիրէի շրջիլ խոհուն
Թէ երեկոյ, և թէ այգուն:

9.

Մինչ դու հպարտ նժոյգի պէս,

Կարշաւէիր լայն ասպարէզ
 Հետ վառերուն, բաշիդ ճ'ումակ,
 Խառնած արփոյն շորեր ոսկիակ:

10.

Մանկութենէս քեզ սիրեցի,
 Ո՛վ ծով նման ծերուկ հօր մեր.
 Օրօրանիս երբ առ ընթիր,
 Մայրն իմ բազմած օրօր կերդեր:
 Քո ահաւոր ձայնի հնչիւնն,
 Կը խառնուէր հետ իւր երգոյն:

11.

Նոյնպէս ախորժ սրտիս կուգար,
 Երբ մըրկաց մէջէն մռայլ,
 Կը դռնէիր դու զայրացած,
 Ալիք փրփուր ուսիդ դիզած.
 Կամ հաշտ լուսնոյ լուսով սիրուն,
 Կը փայլէիր ձագոյ ժամուն:

12.

Ահա կասոյտ դաշտիդ տ'սքէն,
 Խնդաց հողիս, շարժաւ տեղէն.
 Շարժիր և դու իմ ծով, շարժիր,
 Ալիքներով քու ժիրածիր:

13.

Շարժիր, շարժիր, հազար և մի,

Քո նաւերով թեթևակի,
 Քո շուրջ նստած շէն գիշերով,
 Շարժիր խնդայ դու ծափ տալով:

14.

Կապոյտ հովիտ երես պայծառ,
 Չեն ակօսեր նաւեր օտար,
 Ոչ մաս առ մաս կայ բաժանուած
 Դէմքդ բիւրեղ լայն պարզուած,
 Ոչ լուծ երկաթ, և ոչ շղթայ,
 Պարանոցիդ կը ծանրանայ,
 Մէն մի ցնցուած ահագնապես,
 Բոլոր քեզն է բաց կը հերքես,
 Բայց քո եղբօր՝ այդ չէ վիճակ,
 Անզօրանկած, կայ զերթ դիակ,
 Ձայն տուր, ո՛վ ծով, նա թող զարթի,
 Մահուան քնով բաւ չէ հանգչի:

Յետ ողջունէս սիրայորդոր, ջերմագին,
 Մի ժամ առաջ կղձայ լինել իւր տեղին,
 Արդէն արփին իւր բոցեղէն թևերով,
 Ժամանած էր արևմտեան դրան քով,
 Երբ որ Արամն իւր նժոյգով կընթանար,
 Արտամէտու փողոցներէն նեղ երկար,
 Ու քանի մի վարկեան եթէ ըզկրնի,
 Մի տան հանդէպ չըկանգնի նա վաղեմի,
 Կը բաղխէ դուռն, դրան փեղկեր բացուելով,
 Կերևի անդ՝ մի կին ճերմակ վարսերով:
 — «Ո՞վես կասէ, խնդրածդ ի՞նչ է այս ժամուռն,

«Ե՛ր խոռովել, եկիր յարկիս լուսթիւնն,
 «Աստ ոչ ծանօթ, ոչ բարեկամ և ոչ հիւր,
 «Ներս չեն մտած այսքան տարի.— դու այլ ուր,
 «Գնա դտի բեզ իջեան ու օթեակ,
 «Արտամէտում շատ կան տներ լայն արկակ:
 Արամն իսկոյն, կը ճանաչէ իրանց տան,
 Նաղիշ-մամիկ աղախինն: Էր խօսողն այն:
 Բայց նա որքան պառաւցած էր ու կորած,
 Վարսեր դլսոյն ձիւնի նման ճերմկած,
 Աչքունք սօրած, այտեր խամուր ու դժգոյն,
 Ինքը չորցած, թփի նման աղաղուն:
 —Ո՛վ կին, կասէ Արամն, տանէս այլ հեռի,
 «Նս ո՛ւր դնամ, մի՛թէ այդ տան հայր, որդի,
 «Բնաւ չըկայ:— դու ես մենակ որ զերթ բու,
 «Կը բնակիս, արձակելով տխուր վու,
 —«Որդին դնաց օտար աշխարհ, այլ շեկաւ,
 «Ծերուկ հայրը սրտի ցաւէն վաղ մեռաւ,
 «Նոցա կալուած, այդի, պարտէզ, դանձատունն,
 «Կորչեց առաւ բացի տնէս ապարդիւն,
 «Այնքան բարի եմ տերերէն ըզկընի,
 «Մնացի ես, Աստուած հոգիս էլ չ'առնի,
 «Գնա՛ որդի, դնա՛ հեռի, մի դադարկ
 «Տանէս խնդրեր գիշերելու տեղ ու յարկ,
 —«Նի՛թէ յանկարծ այդ տան ժառանգ կամ որդին,
 «Իստնալով դար ինձ պէս կանգնէր մօտ շեմին:
 «Ու պաշտեր նժդէհի պէս տխրորակ,
 «Ձէնք, ներս առնել իւր հայրենի կտուրի տակ,
 «Ինչ կանէիր այն ժամանակ, ասա՛ դու,
 «Ձէ՛իր դրկեր նորան հոգւով սիրարկու,

— «Տասն և երկու տարուց յետոյ, ի՞նչ ցնոր,
 «Նա Արտամէտ դարձած կուգայ մին էլ նոր,
 «Աստուած գիտէ ողջ է այժմիկ, թէ մեռած,
 «Ի՞նչ երկիր նա կապրի, կամ ուր է թաղուած:
 — «Նա չէ մեռած, և ո՛չ օտար կայ աշխարհ,
 «Քո մօտ ահա կանգնած խօսի հեղաբար:
 — «Ա՛խ, վայ գլխիս, չլինի՞ թէ դուն ես դուն,
 «Այն հեռաւոր Արամ ձագուկ մեր սիրուն,
 «Որին այնքան բազուկներիս կրեցի,
 «Մինչ կաթնակիր մանուկ էիր գեղանի,
 «Այժմ դարձած իբրև օտար ու անտուն
 «Հանդէպ դրան քո հայրենի յարկերուն,
 «Կանգնած կըղձաս քեզ շնորհեմ անպատճառ,
 «Քնելու տեղ, մինչ յոյսն դարձած գայ աշխարհ:
 — «Այո՛, թշուառ Արամն եմ ես, նա ձայնով
 «Կասէ տխուր, արտասուքներ թափելով,
 «Նաղիշ-մամիկ հաւատարիմ աղախին,
 «Ահա այնքան տարիներէ դառնադին,
 «Վերադարձած եկի հասի բայց որքան,
 «Փոխուած ես դու, փոխուած են աստ ամեն բան
 «Իու պառաւած, տունն հնացած ու խաղտած,
 «Հայր ու մայրս սև հողերով ծածկուած,
 «Նոցա որդին անհամարձակ, զերթ օտար,
 «Իւր հայրենի դռնէն չիշխէ ներս մտնալ,
 «Կալուած, պարտէզ կան գրաւած յիւր ունիս:
 «Ի՞նչու դարձայ եկայ այստեղ, վայ բաղդիս...
 «Ձոյգ խօսքերուն, գրկախառնած հետ 'լարի,
 «Տէր, աղախին, կը հեկեկան անբառբառ,
 «Ապա մեկնած կերթան 'ի ներս միասին,

Քանի տխուր երևեցաւ Արամին,
 Նրբոր անցաւ սենակներու մէջէն լուռ,
 Ուր ամեն բան էր խանդարած ու թափուր,
 Ուր ամեն բան հող ու փոշի թաթաւած,
 Խառնաշփոթ այս ու այն կողմ էր ցրուած,
 Ուր պատ է պատ, ու դերանէ առ դերան,
 Տորդին թելեր կապած էր սարդն անպիտան,
 Ապա մտած հիւրանոցը կը բազմի,
 Զէնքերն յիրմէ հանդարտ թափած մէկուսի,
 Բուրումն անուշ, յիշատակաց հեռաւոր,
 Կառնէ նա անդ, իւր սիրելեաց մերձաւոր,
 Կարի սիրտը, երբ կը յիշէ այն բոլոր
 Սիրուն օրերն, երբ միատեղ հօր ու մօր,
 Հիւրա՛ ոցիդ մէջ նա կընթրէր, կը խաղար,
 Մնդէտ բնաւ, թէ իւր գլխուն ի՞նչ կուգար:
 Մինչ այս տեսակ կը խորհի նա լռելեան,
 Նաղիշ-մամիկ հաց պատրաստած փութաջան,
 Նորա հանդէպ կը զետեղէ խնդագին,
 Հաց ու դինի, հակիթ, տառելս, խորոված,
 — «Տէր իմ, կասէ ճանապարհէն ես հոգնած,
 «Հրամեցիր, կազդուրէ դու անձիդ ուժ,
 «Թէեւ սեղանն է աղքատիկ և վատ ոյժ,
 «Չի նմանիր քո մանկութեան օրերուն,
 «Ուր կը փայլէր առատօրէն ճօխութիւն:
 Տասն և երկու տարուց յետոյ, ձեռն առած,
 Կը բեկանէր Արամն իւր հօր տան սուրբ հաց:
 Նաղիշ-մամիկ նորա հանդէպ կը բազմի,
 Մինչ նա կընթրէ, ի՛ք սիրալի սրտով մի,
 Ուշի ուշով կառնու զիտել հանդարտիկ,

Երիտասարդ տիրոջ դէմքին գեղեցիկ:
 Քանի խորին ցաւ ու վշտի, հետք, նշմար,
 Նա կընթեռնու անդ դուռնաճ ծածկարար:
 Դալարու ինչ նորաբողբողջ այտերուն,
 Առած էին կարծես աշնան տխեղծ գոյն
 Տաւլի ոսկի թելի նմանն էր զուգուեր,
 Խարտիչագեղ հետ վարսերուն արծաթ թել,
 Ո՛վ վիշտ, ո՛վ ցաւ, ո՛վ անողորմ ժամանակ,
 Փոխուող ձեզնէ Արամը չէ միայնակ,
 Շունչ, թէ անշունչ, իսկզբաննէ քար սրտով,
 Կը մաշէք դուք, որն անագան, որ շուտով:
 Այսպէս երկար կը տիրէ խոր տխրութիւն,
 Անհաւասար այդ սրտերի մէջ խոհուն,
 Ապա Արամն, խոր լռութիւնն ընդհատած,
 Այսպէս յուշիկ իւր աղախին տուաւ հարձ,
 — «է՛ր չես խօսի, մամիկ, անցած օրերէն,
 «Չունիս ինձի մի բան պատմել անցեալէն,
 Երբոր այլ դուք ինձ չը տեսաք յարկիս տակ:
 «Մի՛ լռիր դու, խօսէ տեսնեմ համարձակ:
 — «է՛հ ինչ ասեմ ու ինչ մէկէլ նոր է նոր,
 «Բանամ վերքեր, կրկնեմ անցեալն ահաւոր,
 «Լաւ է լռել, բայց երբոր դու կըստիպես,
 «Հարկ է ասել:» Կառնու պատմել նա այսպէս:—

* * *

«ՆունուՓարի հարէմի մէջ բանտերուն,
 «Երկրորդ աւուր էր լուսնկայ իրիկուն,
 «Արդէն երբէք այդ օրերուն զօր գիշեր,

«Տուն չ'դարձար, չը գիտէինք դու ո՞ւր էր,
 «Լուսահոգի, թէ և քո հայր շատ անգամ,
 «Հարցուց մօրդ «է՛ր չերևար մեր Արամ,
 «Նա ուր մնաց և ո՞ւր գնաց ծածկաբար,
 «Նրթի մասին, է՛ր նա չասաց մեզ մի բառ» :
 «Հուսկ ամենուս կարծիքն այն էր միաձայն,
 «Թէ դու երթած կը լինիս Լէզք, կամ թէ Վան,
 «Գեղը տեսնել կալուածներու ցան ու վար,
 «Իսկ քաղաքը, կրպակներու ստանալ
 «Ամսականներն, չայդ քո գործն էր ամէն հաղ,
 «Նրթալ, հսկել, դառնալ դէպ տունն անյապաղ : —
 «Գիշերն հանդարտ կ'յուաջէր մեղմաբար,
 «Մեր անկասկած սովորաբար հետ իրար :
 «Տէր, տանտիկին, սպասաւոր, աղախին,
 «Հիւրանոցիս մէջ ժողուած միասին
 «Կը խօսէինք սրտով սաստիկ զայրացած,
 «ՆունուՓարի, ու հօր մասին նուաստ, ցած,
 «Նթէ մինչև երբ, տաճիկների բռնութեան,
 «Բաղինք մէք լուծ կտրիճազդ եմ անարժան,
 «Թէ մինչև երբ մեր կին, աղջիկ գեղանի,
 «Մուցանեն նոցա կրքեր լրբենի :
 «Թէ մինչև երբ նոցա շրթունք վայրահաչ,
 «Միշտ անարգեն աւետարանն ու մեր խաչ :
 «Ապա հայրդ առաւ կարդալ Վարդանանց
 «Պատերազմի եղանակներն անմոռաց,
 «Ինչպէս գիտես՝ իւրաքանչիւր իրիկուն,
 «Նա կընթեռնուր ու կ' մէկներ ամենուն :
 «Գիշերային այդ ժամանակ փողոցին,
 «Մէջ կը լսուի ձայն, աղաղակ ահագին,

«Դըրգիւնով թափառական բոցափայլ,
 «Ձիաւորնէր կուգան կերթան սրաւար,
 «Ամէն դռնէ, ամէն բերնէ կ'հնչէ
 «ՆուսուՖարը կանանոցէն փախած է,
 «Ու մէկ մէկու կասէն ապրիք տղերքնէր,
 «Մեր ազգային պատիւն հարկէ պաշտպանել,
 «Զեք տեսնիր որ թուրքեր բալոր կընթանան,
 «Որ փախչողին բռնած բերեն փաշին տան:
 «Արդ մեզ պարտք չէ՞, խեղճ աղջկան զօրավինգ
 «Գնալ, կանգնել, թէ և լինինք հոգի հինգ:
 «Իւրաքանչիւր ըստ իւր սրտի եռանդեան,
 «Մէկը դաշոյն, այլ ոք սուսեր, հրացան
 «Առած մեկնան, որն հետեւակ, որ ձիով,
 «Արտամէտու փութանակի շտապով:
 «Իսկ մեք արդէն լռեցուցած ընթերցուած,
 «Պատշկամբէն կը դիդէինք անձ և դարձն.
 «Երբ փողոցի մթութեան մէջ յանկարծոյն,
 «Կը տեսնուի սուիններու շողշողիւն,
 «Որոնք ահա գալով հանդէպ մեր դրան,
 «Հրացաններ գետին դրած կազնեցան,
 «Ու նոցանից մինն ներս մտած ուղղակի,
 «Կատաղաբար հօրդ վերայ կարձակի,
 — «Իու չե՞ս Սմբաթ, գոռաց, գեւովուր անպիտան...
 «Քեզ կը կանչէ նոյն այս ժամին վեհ փաշան,
 «Ամօթ, ամօթ, նխըզ հայեր, մի աղջիկ,
 «Զեր փաշային տալ դուք բնաւ չուղեցիք,
 «Եւ ստահակ քո որդու հետ նա փախաւ,
 «Աղջկայ հայր—Յակոբ բէկը մեզ ասաւ,
 «Թէ տղայի, թէ աղջկայ փոխանակ,

«Քեզ դիտարարտ ճանաչեցինք միայնակ,
 «Եւ դու օրէս, այս լաւ դիտցիր, ուղղակի,
 «Տէր չես բնաւ, ոչ պարտեղի, ոչ գետնի,
 «Այլ խաւարաշուգ մշտագիշեր զնդանին
 «Մէջ բո օրեր պիտի սահին թաղձագինս
 «Հասկա երթանք, ձեռքն օձիքին ձգելով,
 «Քաշեց տարաւ հայհոյանքներ կարդալով,
 «Երբ դուր ելան, այնտեղ կանգնած զինւորներ,
 «Մեր տիրոջը առան տարան անհամբեր:
 «Իսկ տանեցիքս ափշած, բնաւ սարսափած,
 «Ինչպէս ահեղ շանթէ կղանք զարնուած,
 «Նուաղեցաւ ընկաւ մայրդ նոյն ժամուն,
 «Պատեց դէմքին խիստ մահառիթ դալկութիւն:
 «Մենք շատ լացինք հօր և որդոյդ հէք վիճակ,
 «Որ հանդիպաք բաղդի այդքան դժնդակ,
 «Գիշերն 'ի բուն անբուն աչոք, անդադար,
 «Մորմոքացինք մինչև 'ի լոյս սրբափայլ,
 «Մինչ անուշիկ առաւօտեան հովեր զով,
 «Առին շնջել անուշաբոյր հագագով. . .
 «Ծովն հեռուէն յոխորդ ձայնով ափերուն,
 «Կուտայ կառնու առաւօտեան սերտ ողջոյն,
 «Պարտէղ, այդի իւրեանց սիրուն դեմքերէն,
 «Սեանըկար գիշերուան քօղ վար կառնեն,
 «Հազար տեսակ թռչուններու բարբառով,
 «Կը հնչէ օդ, կապմած անուշ երգերով,
 «Այդ ձայներէն վշտով ցանուած անկողնէն,
 «Ձարթեալ արփին սիրուն դէմքով բոցեղէն,
 «Ձարթեալ բոլոր Արտամէտը վայրացած,
 «Բայց անձաձանչ երկնից նման ամպամած,

«Որ լռելեան կերկնէ ահեղ մորիկ,
«Արտաքսնարար առած դիմակ հանդարտիկ:

* * *

«Իսկ օգնութեան երեկոյեան մութ պահուն
«ՆունուՓարին երթող տղայքն Հայկազուն,
«Այն ժամանակ կ'հասնէին, որ թուրքերն,
«Մի քանի հատ գետնի վերայ ընկած են,
«Ու շատերը վիրաւորուած, արիւնոտ
«Ճամբու վերև, քարակոյտի ստորոտ,
«Շուրջ ժողոված կան դիակին փափկասուն,
«Որոց մարմար կուրծքի խոցէն դէռ արիւնն,
«Բոսորաբուխ վտակաբար կընթանար,
«Ողողելով, սէզ, խօտ ու վէմ հաւասար:
«Երբ որ թուրքեր հայ հեծեալներ կը տեսնուն,
«Թողած դիակն փախուստ կուտան նոյն ժամուն,
«Նորա հասած անդ կը գտնէն հայ կուսին,
«Ջգայազերկ պատած քօղով օրհասին,
«Թէ և կուտան ձայն ՆունուՓար, ՆունուՓար,
«Նորա շրթանց չկայ ոչ շունչ, ոչ բառբառ,
«Անտէր, անոք անապատին մէջ ընկած,
«Մարմինն կուսին ամենազեղ բայց խամրած,
«Կազդէ նոցա հայ սրտերուն գթութիւն,
«Գթութեան հետ՝ վիշտ արտասուք, դառնութիւն:
«Էղբօր աչաց անուշ ցողով, գթով լիք,
«Կը լուանան նորա կուրծքի ճապաղիք,
«Ապա քաղած ծաղկունք վայրի երփնունակ,
«Կը զարդարեն նորա մարմինն սպիտակ,

«Նանասարհի վերայ կանգնող ծառներէն,
 «Կտրած ոստեր պատգարակ մի կը կազմեն,
 «Պատգարակին հանդէսցուցած թշուառին,
 «Դէպ Արտամէտ առած կուգան թաղձաղին:
 «Յանկարծակի կը դղրդայ Արտամէտ,
 «Յովի նման կոհակներով բարձրադէտ,
 «Երբ լուր կառնու, թէ հայ կոյսին դուժ թուրքեր
 «Սպանուած են երբ անձնատուր չէ եղեր:
 «Եւ վերալից նորա դիակ վեր առած,
 «Երթող հայերն առած կուգան սգազգեսաց,
 «Յեր ու մանուկ, երիտասարդ, այր և կին,
 «Կերթան եկող պատկարակին կը յարին,
 «Եւ նոցա հետ խառնաշփոթ ամբոխով,
 «Արտամէտը ներս կմտնեն ողբալով,
 «Եւ վերաւոր կուսին դիակ ձիւնափայլ,
 «Կը զետեղէն շուկայի մէջ լայնատար,
 «Եւ շուրջ նորան ամէն կողմէ բազմութիւն,
 «Հեղեղի պէս թափուած կուգան նոյն ժամուն,
 «Երբ կը տեսնեն կոյսի սիրուն աչիկներ,
 «Կենաց լոյսի համար խաւրեր ու անցեր:
 «Ու այտերու դալար հովտի նորաբաց,
 «Շուշանն ու վարդ դժգոյն դիմոյն թառամած,
 «Երկար, փափուկ ոսկի վարսեր ուսէն վայր,
 «Արիւնաներկ կուրծքի վերայ մածուած կայր,
 «Քաղցրախօսիկ շրթունքներու ծիրանին,
 «Անհետացած զերդ դժգոյն թուփ եղէզին:
 «Տխրատեսիլ այդ տեսարան ամենուն
 «Սրտին կազդէ, ողբ ու հառաջ, բարկութիւն,
 «Ամբոխն յանկարծ մի ահադոյն ձայն բարձած,

«Վրէժ վրէժ, կը բողոքէ կատաղած,
 «Հարիւրաւոր դաշոյն ու սուր և նիզակ,
 «Վեր բարձրացած շողշողացին համարձակ,
 Նոցա գրկին միձայն կասէ օն հայեր
 «Ո՛ւմ կսպասէք ինչո՞ւ համարէք կեցեր,
 «Հուր ու արիւն առած երթանք քաջաբար,
 «Առնենք վրէժ արեան կուսիս գեղափայլ
 «Եւ այդ գոռոզ պիրճ որմերով շինութիւնն,
 «Մեզք ումոյի կրեց միակ որջն ու բոյն,
 «Բռնակալի գլխի վերայ անառակ,
 «Փլուցանենք, քանդենք ցրինք, հիմն յատակ,
 «Թող նա գիտնայ, որ հայն միակ գերութեան,
 «Համար ծնուած չէ՛ զերդ գրաստ անպիտան:»
 «Երթանք երթանք, հազար ձայներ մէջ օդոյն,
 «Կաղաղակեն, կ'յարձակեն նոյն ժամուն,
 «Իսկ վերալեց կոյսին դիակ վեր կառնու,
 «Երկգասարդ վերաբուժ մի փորձառու,
 «Կարծես նորա մէջ գեղեցիկ շինուածքին,
 «Կը նկատէ մի կենաց յոյս վերստին:

* * *

«Սիրդէն արփին լուսանշոյլ իւր ընթաց
 «Կատարած էր: Եւ աղջամուղջ լուամած
 «Կայր տարածուած ամենայն վայր երբ նման
 «Հիւսիսայգի վարդանշոյլ մէջ մթան,
 «Կը բարձրանայ յանկարծ Ղափլան փաշայի
 «Ապարանքի հրդէհի բոցն սոսկայի,
 «Եւ Արտամէտն աւուր նման լուսացած,

Ակնկառոյց նա կը հրճուի սխրացած,
 «Կարծի՛ տեսնել այն բորբոքած բոցերուն,
 «Նարձատման մէջ իւր շղթայից օղերուն,
 «Բէկման ձայներ, որ պահ ընդ պահ նա կառնուր,
 «Երանաշխոթ յորդ ձայներու հետ յախուռ
 «Մինչ սոսկալի, անյադ հուրը թռիչներ,
 «Բարձրացուցած երկնից կամար կը լինէր,
 «Եւ դունդադունդ ծուխ ու փոշի անդադար
 «Հետ հողմերուն նա կուղարկէր ամէն վայր:
 «Սյդ ժամանակ ահա յանկարծ ծերունի
 «Ձերծ զնտանէն, հայրդ մեզ մօտ կը հասնի,
 «Ուրախացած կ'հաւաքուինք նորա բով,
 «Կողջադուրենք արտասուելով խնդալով,
 «Կը հարցանենք— ո՞վ քեզ փրկեց զնտանէն,
 — «Հայերն, ասաց, ու արտասուեց խնդալէն,
 «Սպրին հայերն, երբ նոքա են միասիրտ,
 «Բնէն զարթող առիւծներ են ճշմարիտ:
 «Երբ հուր տուին իշխանական պալատին,
 «Յարձակումով բանդի դուներ կոտրեցին,
 «Ազատութիւն, անմեղ Հայեր գոչելով,
 «Մեր շղթաներ խորտակեցին տապարով:
 «Բանդէն ելած, բանդի դռան յանդիման,
 «Անկերպարան մի դի տեսանք անկենդան,
 «Նորա գլուխ ճզմած ոտքով ողկոյզի,
 «Նման մածուած հետ հաւասար կոյր գետնի,
 «Ըռունդներէն ուղեղն դէպ դուրս էր ճայթքած,
 «Լեզուն բերնէն դէպի գետին երկնցած:
 «Ճանաչեցինք, մեր հայ Յակոբ բէկն էր այն,
 «Ազգուրացի մահով ընկած անկենդան:

«Իսկ խորամանկ Նազիր — Ղափլանն՝ արդէն վաղ,
 «Գուշակելով իւր բռնութիւնն անապաղ
 «Պիտի դրդէ բոլոր սրտերն հայերի,
 «Վրէժխնդիր բարկութեանն մի սոսկալի,
 «Արդէն մեկնած էր նա գաղտնի դէպ ոստան,
 «Թողած իւր տունն ու կնանիքն անպաշտպան,
 «Որոց անշուշտ պալատան հետ հաւասար,
 «Լափլիզից հուր, դարձան գաշախ հողմավար:
 «Իսկ հայրդ տեսաւ իւր ստացուածք գրաւած,
 «Ու իւր որդին աքսորի մէջ, կամ մեռած,
 «Չապրաւ երկար այդ վշտերէն ըսկնի
 «Յետ տասն աւուր իջաւ դամբան տխրալի:
 «Դեռ չորս օր էր, քո հօր տապան փակուած էր,
 «Երբ նորա հետ մայրդ խառնեց իւր հողեր:
 «Արտամէտցի, մեծ ու փոքրիկ սուգ առին,
 «Այս տան թշուառ բախտի վերայ տխրագին,
 «Եւ քո անուան յիշատակը մինչ այսօր,
 «Դեռ կը պահուի միշտ կենդանի ու միշտ նորս
 «Եթէ մի դք այժմիկ յայտնէ քո գալուստ,
 «Եկած թափած էին քո շուրջ ամենուստ,
 «Եւ ի՛նչ սիրով, ի՛նչ խնդութեամբ նոքա ք՛վ զ,
 «Պիտի գրկէն, պիտի պազնէն եղբօր պէս...»
 Լռեց մամիկն պատմութենէն վշտահար,
 Սիրտը ելած՝ լացեց Արամն դառնաբար:—
 Անզգալի կերպով արդէն գիշերուան,
 Ժամերն էին յառաջ անցած լռելեան,
 Ճանապարհի նեղութենէն ու վշտէ,
 Թմրած յոգնած մեր դիւցազնը կ'ըննջէ:

Արևելքը արդէն դէմքէն դերանի,
 Գլշերային քողն էր տարած մեկուսի,
 Եւ լուսափայլ ճակտին շողեր ոսկեհուն,
 Կը ցողանար երկրիս վերայ շուրջ ըսփիւռ
 Երբոր զարթած Արամ բնէն իւր խորհին,
 Ելաւ տնէն լռիկ դիւտօք տխրագին:
 Նորա աչաց, որքան փոխուած փոփոխուած,
 Իւր տներով Արտամէտը երևաց,
 Եւ բանի նա սգաց, թաղձաւ, դառնացաւ,
 Երբոր մի բան սրտին յարմար չըզտաւ,
 Խոսող լեզուով իւր մանկութեան օրերուն,
 Բացի բանի սոսիներէ հաստաբուն,
 Ու վաղեմի Ս. Տաճարէն ուր կերթար,
 Իւր ծնողաց հետ աղօթել հեզաբար:
 Միով բանիւ զիւր շուրջ պատող ամէն բան,
 Իրան վերայ օտարի պէս հայեցան:
 Բայց նորա ուշ կը գրաւէ այդ ժամուն,
 Բարձրութեանն վերայ կանգնող սևագոյն,
 Մի աւերակ, կլիսակործան որմիրով,
 Որ փճացած նա երևէր հրդեհով,
 Անդ կը փութայ և աւերման մէջ կանգնած,
 Կը նկատէ մտքերու մէջ ընկղմած:
 Մըճոտ որմեր ու բայքայած կամարներ,
 Եւ ածխացած դերաններու բեկորներ:
 Բոցէն պայթած ու թխացած քար, խիպար,
 Են ծածկուած խոտով հողով հաւասար,
 Ու կասէ խոր հառաչելով.—Աւերակ,
 Կը ճանաչեմ օ՛վ էիր դուն և հիմակ,

Ի՛նչ ես դարձած, մոխրի դէզ մեծ և ահա,
 Քո պղծութեան դարչելի հոտ դեռ գուգայ:
 Արիւնկզակ գազանի որջ էիր դուն
 Ձէր բնակի յարկերուդ տակ գթութիւն:
 Քո գիշատիչ ճիրաններով ապրասուր,
 Քանի անմեղ զոհեր լափեր, ո՛հ ՚ի զուր
 Նունուֆարիս նման փափուկ գեղեցիկ,
 Որոյ համար անյոյս հոգևով թշուառիկ,
 Քանի գիշեր խուլ որմերուդ շուրջ բոլոր,
 Արտասուեցի, թափառեցայ մենաւոր:
 Այնքան ահել մեծութենէդ փառահել,
 Գազանական պիղծ կրքերէդ գարշ, տգեղ,
 Ի՛նչ թողուցիր տուր պատասխան փոշելից
 Քո բերանով, աքսորելոյս վշտալից:
 Մահահանգոյն խոր լռութիւն աւերման,
 Պերձ պալատին եղև ձայնիս պատասխան:
 Այսպէս ընկճած մի ազգ գիտէ իւր պատուոյն,
 Տալ հատուցում, ինքն իւր բազկաւ քաջ անուն,
 Երբ նա բնաւ ոչ իւր արիւն, ոչ ոսկին,
 Ձի խնայելու ու կը գործէ միասին:

* *

Արդէն գիտես, իմ ընթերցող, աշուղներ,
 Երբոր Արամն Կաղզվանու մեկնածէր,
 Դարձեալ և նոյն աշնանային տխրական
 Եղանակն էր շարունակուող նոյնպէս Վան,
 Երբ միայնակ կին մի բողով սևագոյն,
 Սիրուն, փոքրիկ հետ իւր երկու որբերուն,

Երեկոյեան պահուն տխուր կը քայլէր,
 Կապոյտ ծովի աւազակոյտ եզերներ,
 Ուր պարտէղներ մերկ զարդերէն գեղանի,
 Կը թափէին գետնի վերայ մի առ մի,
 Աշնանային իրանց թփեր դալկագոյն,
 Այդ սևասքօղ կնոջ գէմքէն գեղասուն,
 Ոչոք զխտէր, թէ բնութիւն իւր թախիծ,
 Կառնուր, կամ թէ կուտար, պահուդ տրամալից,
 Եւ հողմաւար տերեւներով ծածկուած,
 Կերերար ծովն անհարթ ճակտով կնճռած:

* * *

Այդ ժամանակ այրած աւեր պալատան,
 Քովէն մեկնած, Արամն կիջնու այգեստան,
 Անդ ծառներու մէջէն հանդարտ քայլերով,
 Նա կը վննէ բոլորն ուշով, կարօտով:
 Քանի տխուր յիշատակներ հեռաւոր,
 Չեն արթննար նորա վշտոտ սրտին խոր,
 Այդ ծառներու հովանեաց տակ նա նախկին,
 Անդամ տեսաւ իւր ապարախդ սիրուհին:
 Այդ ծառներու ծաղկափթիթ օրերուն,
 Զգաց սրտի, սիրոյ, հրդէհն բորբոքուն,
 Զգայազերկ այդ ծառներուն նա այսպէս,
 Կը հարցանէ ձայնով, հողւով տխրատես:—
 «Սիրոյ, վշտաց աւանդապահ ո՞վ ծառներ,
 «Ի՞նչ ինձ ասէք, ո՞ւր գնացին այն ժամեր,
 «Մինչ էի ես նորափթիթ պատանի,
 «Եւ դուք պտուղ ծաղկի, տերեւ գեղանի:

«Այնքան տարուայ աքսորանքէն յետ դարձած,
 «Ձեզ կը տեսնեմ աշնան սքով համակուած,
 «Ինչպէս դուք ինձ յեղափոխուած բովանդակ,
 «Ծանր վշտաց ճնշուած կամ բեռի տակ,
 «Ամենեցուն է ժամանած դառն աշուն,
 «Սրտի կենաց հուրն է շիջած բորբոքուն,
 «Լոկ անցեալի կը հնչէ աստ խուլ բարբառ,
 «Եւ արտասուք աչացս հոսէն գետաբար... :
 Ասաց դիմեց դէպ բզնունին ոյր եղեր,
 Կին մի ասինք իւր որդոց հետ կը քայլեր,
 Սէ քող դլխուն այրիութեան նշանակ,
 Դէմքով տխուր՝ բայց և զիղոյ օրինակ,
 Ու մօտեցած կը հարցանէ «ո՞վ կին դուն,
 «Ո՞ր վիշտ, ո՞ր սէր հետ ծովափիս երերուն,
 «Այդքան հողով կապեց զքեզ ամրապինդ,
 «Որ մոռացած լքեր յարկ պար ու խենդ,
 «Այս տխրորակ եղանակիս ցուրտ աշնան,
 «Հետ ձագերուդ կթափառես դու միայն
 «Արաամէտցի չես, կերևի, այլ հիւր ոք
 — «Բախդէս անգէտ ես դու անշուշտ ու անհող,
 «Բայց արկածիս լուրն ու համբաւ շարաշուք,
 «Հայ աշխարհին շարժեց զայրութ, արտասուք,
 — Ո՞րպէս, ասա՛, կա՛նչեմ խօսքէդ, ո՞վ տիկին,
 «Լուսաբան է զրոյցիդ թել մթազին,
 — Յուստի՞ եկար ո՞վ հիւր սրտիս խոր վերքեր,
 Այսքան տարուայ յետոյ դարձեալ քլքրել,
 Կդձամ պատմել, բայց շունչ սրտիս կ'պակսի,
 Բառբառ լեզուիս հեղձամղձուկ կը մեռնի,
 Կաւ կը լինի որ թոյլ տաս ինձ լուռ լինել,

Քո զբօսման հետ արտասուք չք խառնել:
 — «Մի՛ դու կարծեր, թէ ես եմ ոք բարեփառ,
 «Գուցէ բեզնէն բիւրապատիկ եմ թշուառ,
 «Պատմէ տիկին քո ցաւերէն դառնադին,
 «Շարժած աչուիս մեր արտասուքն միասին:
 — «Որքան որ չէ, դու ես անշուշտ լմացած,
 «Թէ և տեղոյս ծնունդ երբէք չես եղած,
 «Եւ ոչ տեսած ինձ կուսական օրերուս,
 «Այս հովանեաց տակ մրդաբեր ծառներուս,
 «Սակայն, դիտցիր, խոստովանել հարկ է քեզ,
 «Մէջ վայրերուս սիրահարուայ դեղատես,
 «Մի պատանու, Արամ՝ նորա էր անուն:
 «Բայց կարճատև սիրոյ եղև դոյութիւնն,
 «Հազիւ տեսանք ու սիրեցինք մենք իրար,
 «Միմեանց հետ, ասնք լինինք բարեփառ:
 «Իմ անդուծ հայրն զիս վաճառեց հարէմին,
 «Նոր ծովափիս էինք բազմած միասին,
 «Եւ արփալուոյս թևոց ներքև պաշտպանուած,
 «Կը կարծէի ես իմ անձին հալածուած,
 «Կը բռնուիմ թռչնոց նման տկար յոյժ,
 «Աջակցութեամբ անորդեսէր հօր մի՞ դուժ,
 «Մարդիկներէն, Նազիր-Ղափլան Փաշային,
 «Որոնք գերած զիս դէպ հարէմ քարշեցին,
 «Բայց հարէմի հիւր ես չեղայ շատ՝ երկար,
 «Երրորդ աւուր ծագող արփին լուսափայլ,
 «Զըդտաւ ինձ մէջ պալատան փաշային,
 «Արդէն խուսած էի հետ իմ սիրածին:
 «Բայց բախդաւոր ելք չունեցաւ մեր փախուստ,
 «Նոյն իսկ դիշեր մեր զկնի յամենուստ,

«Կը ուղարկուին զինավառած հեծեալներ,
 «Արտամէտուց երկու փարսախ հեռացել
 «Հազիւ էինք, և դեռ զիշեր էր խորին,
 «Մթան մէջէն երբ մեր յետքից կերելին,
 «Հեծեալներու ահեղ մի ջոկ յանկարծոյն
 «Թողած ուղին, քարակոյտին մեք լսկոյն
 «Ապաւինանք, արդէն նոքա հասկացան,
 «Որ էլ չունինք ճար ու ճարակ փախստեան,
 «Նոքա ներքուստ մեք վերեւէն զայրացած,
 «Առինք թափել կրակ վերայ միմեանց,
 «Ձիգ ժամերով անհաւասար այդ կռիւ,
 «Շարունակենք, գուցէ աեւէր մինչ 'ի տիւ,
 «Եւ մեզ յետուստ զայր հասանէր օգնութիւն,
 «Բայց իմ քաջի վառուդն հատաւ յանկարծոյն
 «Երբ թշնամին տեսաւ լռեց մեր զէնքեր,
 «Խրախուսած նա շուտ վազեց դէպ 'ի վեր,
 «Ճրգնաժամին զգացի որ ինձ դարձեալ,
 «Պիտի մատնեն պիղծ հարէմին բռնաբար:
 «Եւ ինձ փրկող հէք պատանոյն սպանեն
 «Իբրև պատճառ իմ փախստեան հարէմէն:
 «Ո՛վ քաջ, ասի, մի' խնայիր դու բնաւ,
 «Թէ սիրելի է հայ կուսիս սէրն, համբաւ
 «Դեռ քո սրտին, այդ դաշունով արևս հատ,
 «Մի' դու ունայն կարեկցութեամբ խանդակաթ,
 «Դարձեալ մատներ, խընայելով իմ անձին,
 «Քո սիրուհին ամօթապարտ այն բանտին:
 «Ո՛հ, որպիսի անյուսուցութիւն ու տազնապ,
 «Ո՛հ, որպիսի մթին սարսուռ ու սարսափ,
 «Նորա սրտի, դեմքի վերայ նկարուաւ,

— «Նրկինք արդար, այս ինչ էր ինձ կայացաւ:
 «Քացադանչեց խեղդուկ ձայնով ահագին,
 «Շողաց դաշոյնն... ու թշնամիք խուժեցին: —
 «Այլ չ'դիտոցայ էի՞ թէ ոչ վայրկենէդ,
 «Ինձմէ դուրս կանր ապրող աշխարհ կենսաւէտ:
 «Այնպէս ինչպէս թէ այս աշխարհ բովանդակ,
 «Անդոյ բնաւ, չունէր կեանք ու արեգակ,
 «Ձէի եղած ես մի էակ դոյաւոր,
 «Ոյր զգացում կար. միտք և բան կարդաւոր,
 «Նրկար, թէ կարճ, այս մահաբեր խոր քնով,
 «Մեռեղատիպ կացի ո՞րքան օրերով,
 «Ինձ յայտնի չէր, և ոչ յայտնի ո՞ր ժամուն,
 «Եղաւ իմ դարձ մէջ աւանխա որմերուն,
 «Այլ կը յիշեմ լոկ այս միայն երբ նախկին
 «Անդամ բացի հայեացքներ տխրագին,
 «Մէջ սենեկիմ դուր յանկարծ զիս պառկած,
 «Անյայտ անձինք շուրջ անկողնիս ժողոված,
 «Եւ վերաբուժ երիտասարդ կորովի,
 «Կը խնամէ իմ կուրծք տկար վերալի:
 «Նրկբայելով իմ էութեան դեռ վերայ,
 «Ես ինձ հարցրի ստոյգ կապրիմ ես հիմայ...
 «Թէ այդ բոլոր ինչ որ շուրջ իմ կեցած եմ,
 «Վտղաթարշամ ու խարուսիկ ցնորք եմ,
 «Որոց հոգիս կ'ստեղծանէ մէջ իրան,
 «Սին, անմարմին կերպարանքների բազմադան:
 «Խաւարակուռ ինչպէս խորին մի գիշեր,
 «Ոյր արեւելք դժգոյն լուսով ճերմակել,
 «Կառնէ յուշիկ ըստ յառաջման ժամերուն,
 «Կարապետող այդոյն պայծառ վարդագոյն:

«Այսպէս գլխէս կերթար յուշիկ խոր մռայլ,
 «Կը պարզուին զգայութիւնք իմ խաւար,
 «Կզգամ, այո՛, որ կենդանի եմ հաստատ,
 «Բայց թշուառիս հոգատարներն գթառատ,
 «Ո՛վ են արդեօք, և ես ո՞րպէս յանկարծոյն,
 «Կը գտնուիմ ներքոյ նոցա յարկերուն,
 «Այդ հասկանալ ինձ անհասէր բնաւին:
 «Ձէ՛ որ առի մահուան հարուած իմ անձին,
 «Կասեմ մտօք, անյոյս բազկէն սիրողիս,
 «Նա վիրալից մէջ քարերուն չընկէց զիս:
 «Ինչպէս, կամ ո՞վ աստ ինձ բերաւ, կամ սոյն վայր
 «Էր գիւղ փոքրիկ, կամ թէ բաղաք լայնատար,
 «Կամ թէ նոյն ինքն, որոյ ձեռքէն ընդունի,
 «Մահու հարուած աղերսաձայն կամովի,
 «Դեռ կը տեսնէ որ ու արև կենդանեաց,
 «Թէ ինձէն յետ նա էլ ընկաւ մահացած:
 «Ապա կանչի խոր հառաչով, ա՛խ, Արամ...
 «Ու նուաղայ, որպէս ծաղիկ մի թարշամ
 «Բաշտի վերայ, կամ առուակին մերձաւոր
 «Ննջողի պէս, անհոգ թոնէն... հեռաւոր
 «Երբ որ կզգայ նախկին տարափ անձրևին,
 «Սմայոց ծոցէն վերուստ հոսած իւր դեմին,
 «Խոր ննջմանէն կոստնու յանկարծ շուարած,
 «Այնպէս և ես դէմքիս վերայ սրակաց
 «Կզգամ ջրի կաթիլներու յորդ բախիւն,
 «Ու բանալով արտեանունքն իմ նկուն,
 «Տեսի դարձեալ նոյն անձինքներ իմ շուրջ լուռ,
 «Նոյն վերաբուժն որ կը ցանէր դէմքիս ջուր
 «Ու ինձ կասէ մի վախենար սիրուն կոյս,

«Բո թարմ, կենաց երկարութեան կայ շատ յոյս,
 «Արիացիր, բաց այդ սիրուն քո աչեր,
 «Գողարիկ դիտէդ մահուան վտանքն է անցեր:
 «Եւ արդարեւ վտանգն արդէն էր անցած,
 «Եւ որ աւուր կառնում զգալ փճացած
 «Զօրութիւնն իմ, երակներուս մէջ դառնալ,
 «Կուրծիս խոցէն յուշիկ յուշիկ ողջանալ:
 «Այլևս օտար չեմ հաշուիր մէջ այդ տան,
 «Ամենք զուարթ ինձ պահելու կը ցանկան,
 «Ոչ որ վերայ իմ անցեալին հէք, թշուառ,
 «Արտասանել չըղձար բնաւ ոչ մի բառ,
 «Եւ որքան որ ես օրէ օր ընտանի,
 «Բարձայ այդ տան, այնքան եղայ սիրելի
 «Ամենեցուն, նա մանաւանդ վիրաբուժ,
 «Երիտասարդ բարերարիս ճարտար յոյժ,
 «Եւ զգացի, իմ ապիկար շնորհ գեղ,
 «Ազդած էին նորա սրտին, սիրազեղ,
 «Պարտք երախտեաց, սիրելոյ հարկ բնական,
 «Արտիս նժարն հարկին յուշիկ դէպ նորան,
 «Ճակատագրի ամոքելու խստութիւն,
 «Հաւան դտայ նորա գողարիկ ջերմ սիրոյն:
 «Յետ չորս ամիս, դժոխքմբեր արկածէս,
 «Արդէն դարձանք ամուսիններ սիրակէզ,
 «Կարծես ցնծայ պահ մի հոգիս քաղցրացած,
 «Մեր իրարու անուշ սիրով փոխադարձ:
 «Բայց և այնպէս սրտիս խորէն ժամ ընդ ժամ,
 «Մըրկելով դուրս կը վազէր դառնահամ
 «Հեղձամղձուկ հառաչանքների տխրագին,
 «Դէպի Արամն, իմ սէր վերջին ու նախկին

«Որոյ բաղդէն երկինք, գետին միաբան,
 «Իեռ կ'լռեն զերդ մահահոտ մի տապան:—
 «Գոյ: ցութեան նախկին ժամէն մտացի,
 «Արարածիմ մասին ինչ որ կորոշուի,
 «Այն անյեղլի բախդի ձեռքով կատարած,
 «Պիտի տեսնի ամենայն մի արարած,
 «Ոչ սև իրանգն կարէ դառնալ լուսափայլ,
 «Եւ ոչ ծնունդ շարաբաստիկ բարեփառ:
 «Ո՛հ, օրպիտի ապախտ արած դժնդակ,
 «Հանդիպեցաւ ծննդեան իմ ժամանակ:
 «Զրտեց շատ, բախդն իմ վերայ նախանձաւ
 «Այդ նորաստեղծ կենացս անիւն էլ բեկաւ,
 «Հազիւ եղայ երկու թշուառ որդոց մայր,
 «Կորուսի շուտ ամուսինն իմ քաջ ճարտար:
 «Այս չորս ամ է, որ կամ այրի, մենաւոր,
 «Փարատելու թախիժ հոգոյս սգաւոր,
 «Հետ ձագերուս երեկոյեան լուռ պահուն,
 «Կուգամ շրջել մերձ ծովակիս օփերուն,
 «Ուր տասներկու տարուց յառաջ միասին,
 «Բազմած գտան Արամի հետն ու տարին...
 «Ուստի նոյնպէս ձիաւորած գիշերայն,
 «Պարզեմք թռիչ մեր տարաբախտ փախստեան:
 «Ու քանի որ կուգամ շրջել այս վայրեր,
 «Կը կանաչի մէջ իմ սրտին նորա սէր,
 «Սէր... որ լռել չունի բնաւ ոչ մի ժամ,
 «Նորա վերայ՝ թէ և սահի հազար ամ...:
 Գեղազիտակ դէմքի պատկերն կայլայլի,
 Արտասանած ձայնը սրտին կը կտրի,
 Կը դողդողեն կարմրալար շրթունքն'լ,

Երգէն յետոյ զերդ քնարի լռող թել —
 Լեռան կողմէն ընդոստ վազող փրփրուն,
 Հեղեղի պէս, որ չը գէ Տես թափուն,
 Մոլեղնոտած տիղմ ու աւազ, վէմ ու ծառ,
 Եթէ յանկարծ ընդդիմակալ թումք պատուար,
 Նորա յախուռ ընթացից դէմ բարձրանայ
 Նա զայրացած կ'պտոյտքէ իւր վերայ
 Ապա յանկարծ տրոփ և գոչ արձակած,
 Պատուած իւր բանդ դուրս կը թափի զայրացած...
 Նոյնպէս Արամն սրտի յուզման դէմ կենալ,
 Այլ չը կրցաւ լռիկ, մնջիկ, անբարբառ,
 — «Ո՛վ ՆունուՔար, դոչեց, ծանիր Արամին,
 «Գերեզմանէն ելած եկաւ քեզ կրկին...»
 Ու դիրկ դրկի պատատուելով Տես իրար,
 Կը հեկեկան, արտասուելով անբարբառ,
 Նոցա լացի համբոյրներու խնդութեան,
 Վէտ վէտ, ճոճուն ծով կը խառնէ իրան ձայն,
 Արփին ոսկի վերջնալուսոյն իւր շողեր,
 Աշունն յետին հողմէն թափած իւր թփեր:

Դ 1892 թի 28 Փետրուարի.



Faint, illegible handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.



821-22

U-00

APR 1 1884



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

891.99

U-66



Համբուրն. Александрополь.
Книжная торговля „ШИРАКЪ“ К. С. Саноянц

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028567

ii
28567